

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ  
Քաղաքական գիտության պատմության և  
տեսության ամբիոն

Ա.Փ.Ենգոյան

“Գաղափարախոսություն” հասկացության  
քաղաքագիտական մեկնաբանությունը

*/Դասախոսության նյութեր/*

Երևան 2014

# Բովանդակություն

Գլուխ 1. Գաղափարախոսությունը որպես հասարակական գիտակցության ռացիոնալ մակարդակ.....	3
1.1. Գաղափարախոսության հասկացության ծագումը.....	3
1.2. Գաղափարախոսության կապը հասարակական գիտակցության այլ ձևերի հետ.....	15
Գլուխ 2. Գաղափարախոսության պատճառա-հետևանքային կապը սոցիալական իրականության հետ.....	24
2.1. Գաղափարախոսության սոցիալական պայմանավորվածությունը .....	24
2.2. Գաղափարախոսության էության արժեքային և հոգեվերլուծական մեկնաբանությունները .....	30
Գլուխ 3. Գաղափարախոսության գործառութային դերակատարությունը հասարակական կյանքում.....	37
3.1. Ֆրանկֆուրտյան դպրոցի մոտեցումը գաղափարախոսական ֆենոմենին.....	37
3.2. “Ինդուստրիալ հասարակության” տեսությունն ու սիմվոլիզմի էությունը.....	41
Գրականության ցանկ.....	52

# Գլուխ 1. Գաղափարախոսությունը որպես հասարակական գիտակցության ռացիոնալ մակարդակ

## 1.1. Գաղափարախոսության հասկացության ծագումը

“Գաղափարախոսություն” տերմինի գիտական իմաստավորումը ժամանակակից քաղաքագիտության մեջ լուրջ տարաձայնությունների տեղիք է տալիս: Ներկա ժամանակներում այն ստացել է մի շարք բնութագրություններ և օգտագործվում է տարբեր սոցիալական երևույթների մատնանշման համար:

Օտարալեզու գրականության մեջ այս տերմինը հայտնի է որպես “ideology” կամ “идеология”: Նման արտահայտությունները կապված են հունարեն երկու բառերի հետ՝ idea և logos: Դրանցից առաջինը՝ idea-ն, նշանակում է միտք, հասկացություն կամ իմաստ: Երկրորդը՝ logos-ը, անտիկ փիլիսոփայության մեջ նշանակում էր խոսք, արտահայտություն կամ համընդհանուր օրենք: Ժամանակի ընթացքում “logos” բառը ձեռք բերեց “գիտություն” իմաստը և ձևափոխված կերպով /logia/ հաճախ օգտագործվում էր այս կամ այն գիտական ճյուղի անվանման համար:

Այսպիսով, “գաղափարախոսություն” տերմինը կարող է ունենալ երեք բացատրություններ՝ բառերով արտահայտված միտք, գաղափարների մասին գիտություն և տրամաբանորեն փոխկապված գաղափարների ամբողջություն: Տերմինի հայերեն հնչողությունն, ինչպես երևում է, համապատասխանում է առաջին մոտեցմանը, որը ժամանակագրության տեսանկյունից առավել հնագույնն է: Մինչդեռ գրեթե մինչև 18-րդ դարի վերջերը գաղափարախոսություն հասկացությունը դեռևս ձևակերպված չէր: Սակայն դա չի նշանակում, որ գաղափարախոսությունն ինքնին գոյություն չուներ: Որոշ հետազոտողներ ենթադրում են, որ մինչև եվրոպական լուսավորության դարաշրջանը պետական գաղափարախոսության դերը հաջողությամբ դարեր շարունակ իրականացնում էր կրոնը:

“Գաղափարախոսություն” հասկացության առաջացումը համընկավ արդյունաբերական հասարակությանը, կամ դասական տերմինաբանությամբ՝ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման հետ: Ինտելեկտուալ առումով այդ դարաշրջանը փիլիսոփայության դարաշրջան էր, կապված գաղափարների

ակտիվացման հետ: Հասկանալի է, որ միայն նման համատեքստում կարող էին ծնվել աշխարհի արդյունավետ կառավարման մասին մտքերը: Ժամանակակից արևմտյան հասարակության առաջացման հենարաններից մեկը հանդիսանում է գիտությունը:

Գաղափարախոսությունը հայացքների, գաղափարների համակարգ է, որն արտահայտում է մեծ հասարակական խմբերի արմատական շահերը՝ ազգերի, դասերի, հասարակությունների, սոցիալական շարժումների: Արտահայտելով սոցիալական շահերը արժեքների, իդեալների և նորմատիվ պահանջների տեսքով, գաղափարախոսությունն իրականացնում է տվյալ սոցիալական հանրույթի ներկայացուցիչների համախմբման կարևոր գործառույթ, խրախուսում է համերաշխությունը և հենք է ծառայում քաղաքական ծրագրերի համար:

Գաղափարախոսություն տերմինն օգտագործվում է տարբեր համատեքստերում և նշանակում է պատկերացումների համակարգված մի շարք, որը ծառայում է հասարակության կոնկրետ սոցիալական խմբի շահերին: Ընդ որում, մեծ հաշվով, այդ գաղափարները կարող են ինչպես համապատասխանել, այնպես էլ չհամապատասխանել իրականությանը :

Կարելի է ասել, որ գիտությունը դարձավ է քաղաքական ու սոցիալական կարգերը լեգիտիմացնող բարձրագույն հեղինակություն: Այլ կերպ ասած՝ գիտությունը հովանավորության գործիք է: Գաղափարախոսությունը սկսեց է արագորեն ազդել գիտության վրա: Որոշ փիլիսոփաների կարծիքով ժամանակակից գաղափարախոսությունների մեծ մասը, անկախ իրենց ծագումից, հավակնում են դառնալ գիտական: Նման ձևով դրանք ձգտում են ապահովել իրենց լեգիտիմությունը: Հիշենք գիտական հեղափոխության 17-րդ դարի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնի խոսքերը, ով կարծում էր, որ գիտելիքը ուժ է /կամ իշխանություն/: Այդ ուժի /իշխանության/ բաղկացուցիչ մասը այն մարդկանց հեղինակությունն է, ովքեր օժտված են գիտելիքներով: Ըստ այդմ էլ, գիտնականներն ունեն նույն ազդեցությունն, ինչ քահանաները Հին Եգիպտոսում: Իշխանությունը, որն իրեն է ձգում այդ ուժը, կարևոր աղբյուր է ձեռք բերում հովանավորության համար:

Արևմուտքի բոլոր երկներում, որտեղ տեղի ունեցան բուրժուական հեղափոխությունները, գիտնականները, փիլիսոփաները և հումանիստներն իրենց ներդրումն են ունեցել գաղափարախոսության միջոցով զանգվածների նկատմամբ

ծրագրավորված կառավարումն իրականացնելու գործում: Օրինակ, Անգլիայում Նյուտոնը և նրա հետևորդները աշխարհի նոր /մեխանիկական/ պատկերից բխեցնում էին սահմանադրության “բնական” էությունը, որը պետք է սահմանափակեր միապետի իշխանությունը:

Հասարակական գիտակցության մանիպուլյացիան, դրսևորվեց հատկապես Ֆրանսիայում: Այտեղ լուսավորչական դարաշրջանի գործիչների կեսդարյա աշխատանքի շնորհիվ հասարակությունը գաղափարապես պատրաստված էր հին կարգերի փլուզմանը: Հասարակության և գիտության աշխարհիկացումից զատ նրանք իրականացրեցին գաղափարախոսական առումով “ուղեղների խորը լվացում” նախապատրաստելով հեղափոխականների մի նոր սերունդ, որը “մաքուր խղճով” խեղդե՞ծ էին Ֆրանսիան արյան մեջ:

Պատահական չէ, որ հենց Ֆրանսիայում առաջին անգամ օգտագործվեց “գաղափարախոսություն” հասկացությունը: 1796 թ. այն շրջանառության մեջ դրեց ֆրանսիացի լուսավորիչ Անտուան Դեսթյուր դե Թրասին իր “Խորհելու ունակությունների մասին էտյուդում”: Գաղափարախոսությունն անվանելով տեսություն գաղափարների մասին՝ դե Թրասին և նրա գաղափարակիցները դրա մեջ էին ներառում գիտական տեսությունների ամբողջությունը, որն ուսումնասիրում էր մարդկային հոգեբանությունը, գիտակցությունը, գիտելիքները, այսինքն՝ այն ամենը, ինչը պետք է ներկայացնի գաղափարախոսությունը որպես “մտքերի զարգացման” անփոփոխ և համընդհանուր օրենքների մասին գիտություն:

1797թ. դեկտեմբեր ամսին գաղափարախոսներն ընդգրկեցին իրենց նեղ շրջանակներում իշխանության ձգտող Նապոլեոնին: Ավելի ուշ, երբ Նապոլեոնը դարձավ առաջին կոնսուլ, նրանք դեմ գնացին վերջինի կայսերատիրական նկրտումներին: Այդ կապակցությամբ Նապոլեոնը քամահրանքով նրանց անվանեց “գաղափարախոսներ”, այսինքն՝ մարդիկ, ովքեր իրական քաղաքականությունից կտրված հայացքներ էին քարոզում:

Նման բացասական մեկնաբանությունները տարածվում էին ողջ Եվրոպայով մեկ: Լուսավորչական դարաշրջանի ազատական մտավորականներին սկսեցին անվանել “սև մետաֆիզիկներ”: Մինչդեռ, դա ոչ մի կերպ չխանգարեց գիտնականներին շարունակել մտորումները գաղափարախոսության էությունը

պարզաբանելու վերաբերյալ: Մյուս կողմից գաղափարների և իրականության, տեսության և գործնականի հարաբերակցության հարցը դադարեց զուտ ակադեմիական հանդիսանալուց, այլ դարձավ գործնական քաղաքականության հիմնախնդիր:

Գաղափարախոսության նկատմամբ իրենց վերաբերմունքը որոշելով՝ շատ հետազոտողներ և գիտնականներ հաճախ ելնում են դրա տարբեր մեկնաբանություններից: Թեպետև «գաղափարախոսություն» տերմինի արտաբերումն ու իմաստային բովանդակությունը չեն գտնվում միանշանակ համապատասխանության մեջ, գրականությունում այն օգտագործվում է տարբեր իմաստներով:

Հասարակության մեջ գաղափարախոսության դերի տարբեր բնութագրումները բացատրվում են ոչ միայն տվյալ երևույթի տարբեր ըմբռնումներով, այլև բովանդակային մոտեցմամբ՝ կապված գաղափարախոսության՝ որպես արդիական սոցիալական երևույթի, որն ակտիվ փոխազդեցության մեջ է գտնվում հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ:

Հասարակական գիտակցության մեջ գաղափարախոսությունը դրսևորվում է որպես հոգևոր և հայեցակարգային-տեսական երևույթ: Ուստի հասկանալի է, թե ինչու գաղափարախոսությունը երբեմն մեկնաբանվում է որպես աշխարհայացք, երբեմն նույնացվում է առասպելի, կրոնի կամ բարոյականության հետ, երբեմն էլ դիտարկվում որպես սոցիալական տարբեր շերտերի շահերը արտահայտող երևույթ: Գաղափարախոսությունը հաճախ հաղես է գալիս որպես բացառապես քաղաքական երևույթ, որոշ դեպքերում էլ ընդգծվում է դրա ճանաչողական նշանակությունը: Գաղափարախոսության նկատմամբ նման մոտեցումները պայմանավորված են հասարակական գիտակցության բազմամակարդակ և բազմաֆունկցիոնալ բնույթով:

Որ կողմից էլ որ դիտարկելու լինենք հասարակական գիտակցությունը, ամենուր կարելի է նկատել գաղափարախոսության ներկայությունը: Այն թափանցում է գիտակցության բոլոր ձևերի մեջ /քաղաքական, իրավական, կրոնական, գեղագիտական և այլն/ և ամենուր այն հանդես է գալիս հասարակական հոգեբանության հետ միասնության մեջ: Հասարակական հոգեբանության և գաղափարախոսության փոխհարաբերությունները պայմանավորված են նրանով, որ

առաջինը էմոցիոնալ և զգայական է, իսկ երկրորդը հասարակական գիտակցության բանական մակարդակն է:

Հասարակական հոգեբանությունը զգացումնքների, տրամադրությունների, համոզմունքների, մտքերի, հայացքների ամբողջությունն է, որը բնորոշ է ինչպես հասարակությանն ամբողջապես, այնպես էլ առանձին սոցիալական խմբերին և էականորեն փոփոխության է ենթարկվում սոցիալական իրականության պատմական պայմանների ազդեցությամբ<sup>1</sup>: Հասարակական հոգեբանությունը ձևավորվում է ինչպես կյանքի նյութական պայմանների, իրական հասարակական հարաբերությունների արտացոլման, այնպես էլ հասարակական գիտակցության այլ ձևերի, ինչպես նաև գաղափարախոսության ազդեցության արդյունքում: Գաղափարախոսությունը զանգվածների մեջ նոր հույզեր չի առաջացնում: Նա մաքրագերծում, գիտակցված ձևակերպում է դրանք՝ նպաստելով հոգեբանական որոշակի գծերի ուժեղացմանը և մյուսների հնարավորինս թուլացմանը:

Գաղափարախոսությունը բանականորեն հիմնավորում է սոցիալական խմբերի գործողությունները, մշակում է զանգվածների համոզման միջոցներ և մեթոդներ, որոնց օգնությամբ հնարավոր է նրանց մոտ քաղաքական ձգտումներ առաջացնել, օգնել նրանց անհրաժեշտ ձևով գնահատել այս կամ այն երևույթը, գիտակցել սեփական շահերը: Կարելի է ասել, որ գաղափարախոսությունը առաջանում է, որպեսզի ազդեցություն գործի մարդկանց սոցիալական հոգեբանության վրա մեկ նպատակով՝ ուղորդել այն որոշակի նպատակների իրագործմանը:

Հասարակական հոգեբանության և գաղափարախոսության միասնությունը դեռևս չի նշանակում, որ դրանք զուրկ են արտահայտման առանձնահատկություններից: Դա վերաբերում է, առաջին հերթին, ծագման խնդիրներին: Եթե առաջինը ձևավորվում է ինքնաբուխ, կյանքի իրավիճակների անուղղակի ազդեցությամբ, ապա երկրորդը՝ սոցիալական հանրույթի առանձին անհատների տեսական գործունեության արդյունք է: Գաղափարախոսները կարող են չպատկանել այն սոցիալական խմբին, որի շահերն արտահայտում են: Մինչդեռ,

---

<sup>1</sup> Ст' у, Енгоян А.П. Идеология и общественное сознание. Ер. 2009. – С. 6

գաղափարախոսությունը “շարադրելու” ընթացքում նրանք արդեն հանդես են գալիս սովյալ սոցիալական խմբի մտավորականների դերում:

Ամփոփելով կարելի է ասել, որ գաղափարախոսությունն ու հասարակական հոգեբանությունն իրենցից ներկայացնում են երկու փոխկապակցված և միմյանց մեջ ներթափանցող երևույթներ, հասարակական գիտակցության երկու մակարդակներ: Ընդ որում, հոգեբանությունը հանդես է գալիս գաղափարախոսական ֆենոմենի “հիմնաքարի” դերում, ինչը չի բացառում գաղափարախոսության հետադարձ ազդեցությունը մարդկանց հոգեբանության վրա: Դեռևս մարդկային հասարակության առաջացման ժամանակներից տեղի է ունենում որոշակի հասարակական մտքերի փոխարինման անդադար գործընթաց, հին և նոր գաղափարախոսությունների անվերջ պայքար մարդկանց գիտակցությանը տիրանալու համար:

Գաղափարախոսությունը հասարակական երևույթ է, այդիսկ պատճառով այն հանդես է գալիս ոչ թե անհատական, այլ սոցիալ-խմբային, կամ ամբողջապես հասարակական մակարդակով: Մինչդեռ դա թերևս չի նշանակում, որ անհատական գիտակցությունը կտրված է գաղափարախոսությունից: Գաղափարախոսությունը, մշտապես, իր առջև սոցիալական հանրության գիտակցության նվաճման նպատակ է դնում, իսկ դրան հասնել հնարավոր է միայն յուրաքանչյուր անհատի գիտակցության վրա ազդեցություն գործելու միջոցով:

Սոցիալ-խմբային հոգեբանության հիմք են հանդիսանում մարդկանց ընդհանուր պահանջմունքները: Մինչդեռ, հասարակական գիտակցության փոփոխության և գաղափարախոսության ծագման գլխավոր խթան պետք է համարել շահերը: Շահերը միայն անուղղակիորեն են կապված մարդկանց ֆիզիոլոգիական ցանկությունների հետ: Պետք է հաշվի առնել հասարակության մեջ մարդու ոչ միայն ֆիզիոլոգիական, նաև այլ բնույթի /բնական, սոցիալական/ պահանջմունքները: Ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարումը օգնում է նրան գոյատևել որպես կենսաբանական էակ: Սոցիալական պահանջմունքների բավարարումը մարդուն մոտեցնում է հասարակական կյանքին՝ թույլատրելով նրան օգտվել հասարակության բոլոր բարիքներից:

Հաճախ շահերն ինքնին մեծ ազդեցություն են ունենում պահանջմունքների ձևավորման վրա: Ընդհանրապես, հասարակության շահերն ու պահանջմունքները ոչ



միայն չեն համընկնում, այլև կարող են հակադրվել միմյանց: Այդ մասին է վկայում թեկուզև այն փաստը, որ շատ հաճախ իրականության մեջ որոշակի կերպով գիտակցված սոցիալ-խմբային շահերը մարդկանց կողմից վեր են դասվում անհատական նյութական, կամ անգամ ֆիզիոլոգիական պահանջումներին, ինչը անհատին գոհաբերության է մղում հանուն ընդհանուր շահերի:

Շահերը մարդկանց գիտակցությունից դուրս օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրական հարաբերություններն են: Դրանք խթանում են նոր գաղափարների տարածմանը կամ էլ հին գաղափարների տարհանմանը: Ըստ հայազգի հայտնի հետազոտող Ռ.Սամսոնովի, գաղափարները հասարակության մեջ տարածում են գտնում այն պատճառով, որ “նրանցում արտահայտված են հասարակության կոնկրետ շերտերի յուրովի գիտակցված շահերը”: Սոցիալական խմբերի և հասարակության շահերը լավագույն ձևով արտահայտվում են փոխկապակցված և փոխալայմանավորված գաղափարական համակարգի միջոցով: Թեև պետք է նշել, որ շահերը, գաղափարների համեմատությամբ, առավել օբյեկտիվ բնույթ են կրում:

Տարածվող գաղափարներն իրենցում որոշակի նպատակաուղղվածություն են ներառում: Նպատակի ընտրության և իրականացման պայմաններում սոցիալական խմբերը կողմնորոշվում են դեպի արժեքները, իդեալները և նորմերը: Արժեքայնությունը որևիցե երևույթի, առարկայի պոզիտիվ ընկալումն է մարդու, մարդկանց խմբերի կամ հասարակության կողմից: Դա հենց ինքնին օբյեկտների հատկանիշը չէ, այլ սուբյեկտների կողմից նրանց նշանակության գիտակցումը:

Արժեքներն, իրենց հերթին, գիտակցականում արտահայտվում են արժեքային կողմնորոշումների տեսքով: Մարդը, ինչպես նաև կոլեկտիվը և հասարակությունը, ունեն բազմաթիվ արժեքային կողմնորոշումներ, դրանցից որոշները առավել էական են, իսկ մյուսները՝ երկրորդական: Այնպիսի երևույթի համար, ինչպիսին գաղափարախոսությունն է, մեծ նշանակություն են ձեռք բերում կողմնորոշումները դեպի բարձրագույն արժեքները՝ իդեալները: Իդեալը դա օրինակ է, նախատիպ, կատարելության գաղափար, ձգտումների բարձրագույն նպատակ: Դրանով է պայմանավորված հասարակության հետագա զարգացումը:

Հասարակության մեջ արժեքների մասին ընդունված պատկերացումներից էլ ձևավորվում են նորմերը: Դա օրինակ է, կանոն, գործունեության սկզբունք՝

ընդունված սոցիալական հանրային կողմից<sup>2</sup>: Նորմը՝ որոշակի սոցիալական միջավայրում ընդունված պահանջների ամբողջությունն է, որը կարգավորում է մարդկանց վարքը, նրա գործունեության մնացյալ ձևերը<sup>3</sup>:

Այսպիսով, գաղափարների, իսկ նրանց հետ նաև գաղափարական համակարգերի ծագումը տանում է գաղափարական համակարգերի ձևավորմանը, որոնք իրենց տեսական ձևակերպումը ստանում են գաղափարախոսների կողմից: Գաղափարախոսությունները, առաջին հերթին, առաջ են գալիս կոնկրետ սոցիալական խմբի կամ ողջ հասարակության գիտակցության վրա ազդելու նպատակով՝ նրանց հետագա մոբիլիզացման և կողմնորոշման համար:

Գաղափարական համակարգերը զանգվածային գիտակցության սեփականությունը դառնալու համար պետք է վերածվեն սոցիալական խմբերի և հասարակության շերտերի համոզմունքների: Մարդկանց համոզմունքների վերածվելու համար գաղափարները պետք է իրենց նկատմամբ որոշակի դրական զգայական վերաբերմունք հարուցեն, առանց որի անհնար է տիրապետող դիրքեր գրավել հասարակության մեջ:

Գաղափարախոսությունը, հանդես գալով որպես սոցիալական հանրային գիտակցության տեսականորեն ձևակերպված համակարգ, միաժամանակ նմանվում է տվյալ խմբի ինքնագիտակցությանը: Ինքնագիտակցության ձևավորման աղբյուրները զենետիկորեն պայմանավորված են որոշակի ինքնագիտակցություն ունեցող սուբյեկտի ակտիվ սոցիալ-քաղաքական հարաբերակցությամբ այլ սուբյեկտների հետ: Փորձի հիմքով սկսում է գործել սոցիալ-քաղաքական համեմատության օրենքը՝ աստիճանաբար տանելով ինքնագիտակցության այս կամ այն տարրերի ձևավորմանը: Սոցիալական համեմատությունը կապված է սոցիալ-քաղաքական հակադրման մեխանիզմների գործառնությամբ կամ, ընդհակառակը, սոցիալ-քաղաքական նույնականացմամբ: Առաջին դեպքում քաղաքական ինքնագիտակցությունը զարգանում է “Ես”-“նրանք” հակադրման հիմքով /անհատական սուբյեկտի պարագայում/, կամ “մենք”-“նրանք” /խմբային սուբյեկտի պարագայում/: Երկրորդ պարագայում զարգացումն ընթանում է այլ սխեմայով՝ “Ես”-“մենք”: Ե՛վ մեկուսացումը, և՛ նույնականացումը համարվում են անհրաժեշտ

<sup>2</sup> Տե՛ս, *Философский энциклопедический словарь*. М. 1989. –С. 428

<sup>3</sup> Տե՛ս, *Современная философия: словарь и хрестоматия*. Ростов-на-Дону, 1995. –С. 52

ինքնագիտակցության ձևավորման համար, թեև ունեն հակադիր ուղղություններ: Նմանատիպ գործընթացներ դիտարկվում են նաև գաղափարախոսությունում: Դրանով է բացատրվում գաղափարախոսության կողմից “իրենց” և “օտար”-ի ընդունումը տարբեր սոցիալական սուբյեկտների միջավայրում, առանց որի իր գոյությունն ուղղակի անհնար է:

Միննույն ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն տարբերությունները, որոնք առկա են գաղափարախոսության ու ինքնագիտակցության միջև: Դավերաբերում է, առաջին հերթին, գաղափարախոսության ու ինքնագիտակցության կրողներին: Նման սուբյեկտներ կարող են հադես գալ ինչպես սոցիալական խմբերն ու հասարակությունն ամբողջապես, այնպես էլ անհատները: Պատահական չէ, որ ինքնագիտակցությունը լինում է ինչպես, օրինակ, նեղ խմբային, այնպես էլ անհատական: Գաղափարախոսությունը չի կարող լինել անհատական, այն մշտապես հասարակական բնույթ է կրում /թեև այն չի կարող գոյատևել մեկուսացված անհատական գիտակցությունից/:

Անդրադարձը հասարակական գիտակցության կառուցվածքին օգնում է ի հայտ բերել նաև գաղափարախոսության կառուցվածքը: Հետազոտողները տարբեր կերպ են մոտենում տվյալ խնդրին: Օրինակ, ըստ Մարտին Սելիջերի, “գաղափարախոսություն” հասկացությունը կիրառելի է համոզմունքների բոլոր համակարգերի նկատմամբ: Կախված նրանից, թե ով է ղեկավարում և կառավարում քաղաքական գործողությունը, գաղափարախոսությունը պետք է կողմնորոշվի միայն քաղաքական համոզմունքների համակարգերի նկատմամբ՝ անկախ այն բանից, դրանք հեղափոխական են, բարեփոխական, թե՛ պահպանողական: Գաղափարախոսությունն, ըստ Մ.Սելիջերի, կոնկրետ գործողությունների միտված համոզմունքների ամողջություն է: Ցանկացած գաղափարախոսության բաղադրիչներից են վերլուծությունը, բարոյական և տեխնիկական նկարագրությունները, գործիքներն ու ժխտումները<sup>4</sup>: Մ.Սելիջերը գտնում է, որ գաղափարախոսությունը բաժանել բաղկացուցիչ մասերի հնարավոր է միայն տեսականորեն: Իրականում գաղափարախոսությունները ներառում են արժեքների վրա հիմնված իրավիճակի նկարագրությունն ու վերլուծությունը:

---

<sup>4</sup> Տե՛ս, Seliger Martin. Ideology and Politics London: George Allen & Unwin, 1976. P. 91-92

Հետաքրքրական է Դ.Օլշանսկու մոտեցումը այս հարցի շուրջ, ով նշում է, որ խմբային գաղափարախոսությունում առանձնացվում են երեք հիմնական տարրեր: Առաջին հերթին դրանք տվյալ մեծ խմբի արժեքներն են: Երկրորդ՝ գիտակցության, կյանքի և խմբի վարքի հիմնական նորմերը: Եվ, վերջապես, երրորդ՝ վարքագծի կոնկրետ օրինակն է տվյալ խմբի ներկայացուցիչների համար<sup>5</sup>: Այս մոտեցումից բացի կան նաև այնպիսիները, որոնք գաղափարախոսության կառուցվածքի մեջ ներառում են նաև սոցիալական կողմնորոշումները և նույնիսկ դերային պատկերացումները:

Դ.Օլշանսկու կողմից տրված գաղափարախոսության առաջին երկու կառուցվածքային տարրերին կարելի է ավելացնել ևս մեկը՝ իդեալները, որոնք հանդիսանում են յուրօրինակ կողմնորոշիչներ, առանց որոնց անհնար է որևէ լուրջ սոցիալ-քաղաքական գործընթաց: Առանց իդեալների չի կարող գոյություն ունենալ ոչ մի գաղափարախոսություն:

Վերջապես, գաղափարախոսության կառուցվածքի մեջ պետք է ներառել տեսական հիմքը՝ համապատասխան հայեցակարգը: Հայեցակարգը իրենում ընդգրկում է գաղափարախոսության վերոնշյալ բոլոր թվարկված կառուցվածքային տարրերը մեկ միասնական, տրամաբանորեն հիմնավորված գաղափարական համակարգի մեջ: Հենց սոցիալական խմբի կողմից սուբյեկտիվորեն ընդունված հայեցակարգն էլ արտահայտում է նրա շահերը, կազմում է գաղափարախոսության առանցքը: Այսպիսով, ելնելով գաղափարախոսության կառուցվածքային բնորոշումից, նրան կարելի է ներկայացնել որպես սոցիալական խմբերի շահերի տեսանկյունից գաղափարա-տեսական հիմքով արտահայտված արժեքների, նորմերի և իդեալների միասնություն:

Գաղափարախոսությունը, կապված լինելով արդյունաբերական հասարակության գրեթե բոլոր ոլորտների հետ, առաջ է քաշում բազմաթիվ իրարամերժ երևույթներ: Եվ եթե ճշմարիտ էր Հեգելը, ով գտնում էր, որ ճշմարտության չափանիշը հանդիսանում է հակասությունը, իսկ դրա բացակայությունը՝ մոլորեցման չափանիշը, և որ ինքնին ճշմարիտը հանդիսանում է

---

<sup>5</sup> Տե՛ս, Ольшанский Д. Основы политической психологии, Екатеринбург, 2001. – С. 295

“ընդդիմադիր սահմանումների ամբողջությունը”<sup>6</sup>, ապա գաղափարախոսության առարկայական էությունը կապված է հենց իր ներքին հակասությունների հետ:

Այս առնչությամբ արժե նշել, որ գաղափարախոսության ներքին հակասությունները կարող են կրել անհրաժեշտ կամ պատահական բնույթ: Անհրաժեշտ հակասությունները բնորոշ են ինքնին գաղափարախոսության էությանը և հանդիսանում են նրա մշտական ուղեկիցները: Ինչ վերաբերում է պատահական հակասություններին, ապա դրանք արտահայտվում են կոնկրետ պատմական պայմաններում:

Ելնելով այն բանից, որ գաղափարախոսության համամարդկային կողմը ոչ միայն գոյություն ունի, այլև անշեղորեն ընդլայնվում է, որոշ հեղինակներ համարում են, որ գաղափարախոսությունը վերածվում է “համամարդկային արժեքի”: Գաղափարախոսություններում, հասարակության նկատմամբ համընդհանուր հայացքի հետ մեկտեղ, մշտապես գոյություն է ունենալու նաև հասարակական ուժերի հատուկ վերաբերմունքը, որն էլ ձևավորելու է իրենց յուրովի գնահատականը քաղաքական գործընթացների վերաբերյալ:

Նշյալ հակասության զարգացման որոշակի շարունակությունը կարելի է համարել համընդհանուր-սոցիալականի և առանձին-խմբայինի միջև եղած հակասությունը: Ցանկացած գաղափարախոսություն, ներկայացնելով առանձին սոցիալական խմբի շահերը, սովորաբար հանդես է գալիս նաև ամբողջ հասարակության շահերի և պահանջմունքների արտահայտողի դերում: Գաղափարախոսության այս կողմը հավասարապես վերաբերում է ինչպես առաջադեմ, այնպես էլ հետադիմական խմբերին:

Գաղափարախոսությանը բնորոշ մյուս հակասությունն արտահայտվում է մի կողմից՝ հայեցակարգային, մյուս կողմից՝ սոցիալ-հոգեբանական գործոնների համադրության մեջ: Հաջորդ հակասության էությունը կայանում է նրանում, որ գաղափարախոսության մեջ սովորաբար համակցվում են ժամանակակից-իրական և ուտոպիական կողմերը: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկացած գաղափարախոսություն իր մեջ ուտոպիական գաղափար է կրում՝ իր

---

<sup>6</sup> Տե՛ս, Гегель Георг Вильгельм Фридрих. Письма // Работы разных лет: Серия “Философское наследие”. – В 2-х т. – М. 1970–1973. Т. 2. – С. 446

տեսակի մեջ իդեալական, որը պետք է տեղի ունենա ապագայում<sup>7</sup>: Ընդ որում ուտոպիան հաղես է գալիս բաղադրիչի դերում՝ որպես ցանկացած գաղափարախոսության բաղկացուցիչ մաս: Մարդիկ, ինչպես հայտնի է, չեն կարող ապրել առանց ապագային միտված պատկերացումների, առաջընթացի, որով իմաստավորվում է նաև ներկա կյանքը: Ինչպես նշում է Մանհեյմը, աշխարհն առանց ուտոպիաների կկորցնեի իր բազմաչափությունը, կնշանակեր մարդկային կամքը ոչնչացնող ռացիոնալիզացված համակարգի և “գորշ” ուտիլիտարիզմի հաղթանակ, որի պայմաններում մարդը կդադարի հանդես գալ պատմության կերտողի դերում<sup>8</sup>:

Գաղափարախոսության մյուս հակասությունը կապված է կայուն-մշտական և անցողիկ-ժամանակավոր բաղադրիչներով: Այն դեպքում, երբ մշտական բաղադրատարրերն անդրադառնում են գաղափարախոսության հիմքերին և մնում անփոփոխ, ապա ժամանակավոր բաղադրատարրերը կարող են հանգեցնել նույնիսկ նոր գաղափարախոսությունների առաջացմանը:

Գաղափարախոսության հաջորդ հակասությունը պայմանավորված է այդ երևույթի բարդ և պարզ դրսևորումների միասնությամբ: Մի կողմից գաղափարախոսությունն առաջարկում է սոցիալական իրականության քիչ թե շատ խորը վերլուծություն, տեսական բարդ խնդիրների լուծում, որը միշտ չէ, որ հնարավոր է արտահայտել պարզ լեզվով: Մյուս կողմից, զանգվածների վրա ակտիվ ներգործություն իրականացնելու համար գաղափարախոսությունը զգալիորեն պարզեցնում է տեսական մոտեցումները, մատչելի դարձնելով դրանք զանգվածների համար:

Գաղափարախոսություններն իրականացնում են մոբիլիզացման և ներգրավման գործառույթներ: Նրանք համախմբում և ոտքի են հանում հասարակության սոցիալական շերտերին, ուղղում կոնկրետ գործողությունների և ոգեշնչում պայքարի՝ հանուն սեփական շահերի պաշտպանության: Գաղափարախոսությունները, ձևավորելով առանձին սոցիալական շերտերի և խմբերի, կամ էլ ազգային հանրությունների ինքնագիտակցությունը, փաստացիորեն առանձնացնում են նրանց այլ սուբյեկտներից: Այսպիսով, հասարակության ներսում յուրօրինակ սահմանազատում է տեղի ունենում՝ կապված սուբյեկտների

<sup>7</sup> Տե՛ս, Кольев А.Н. Политическая мифология: Реализация социального опыта. М. 2003. – С. 211-212

<sup>8</sup> Տե՛ս, Мангейм К. Идеология и утопия // Мангейм К. Диагноз нашего времени. М. 1994. – С. 218

դիրքորոշման ճշգրտման և դրանց տարանջատմանն հետ: Այս իրավիճակը ևս կարելի է բնութագրել որպես գաղափարախոսության հակասության դրսևորում:

Գաղափարախոսության հաջորդ հակասությունը կարելի է համարել այն, որ մի կողմից նա ժխտողական վերաբերմունք է դրսևորում հասարակական կյանքի որոշ երևույթների նկատմամբ, մյուս կողմից էլ առանձնացնում է նմանատիպ երևույթների մի շարք, ներկայացնելով դա որպես դրական, իդեալական: Գաղափարախոսության նշյալ հակասության հետ սերտորեն կապված է մեկ այլը՝ լեգիտիմացման և ապալեգիտիմացման միջև հակասությունը: Քաղաքական գաղափարախոսության կարևորագույն գործառույթներից է հանդիսանում կոնկրետ քաղաքական ուժերի և ուժիմների իշխանության լեգիտիմացումը: Մի կողմից, տիրապետող գաղափարախոսությունները հիմնավորում են կոնկրետ քաղաքական ուժերի իշխանությունը, իսկ մյուս կողմից ձգտում են զրկել ընդդիմությանը իշխանության գալու հնարավորությունից: “Հակագաղափարախոսությունները” ևս իրականացնում են այդ գործառույթը, լեգիտիմացնելով ընդդիմադիր ուժերի ձգտումները պետական իշխանության նկատմամբ:

Գաղափարախոսությունն այս կամ այն չափով իր մեջ ներառում է ինչպես սուբյեկտիվ-արժեքային գործոններ, այնպես էլ աշխարհի արտացոլման օբյեկտիվ-իրական տարրեր: Դրանով ապահովվում է կայուն կապը գաղափարախոսության ու սոցիալական կյանքի միջև, ինչն անհրաժեշտ է գաղափարախոսությունը ակտիվ հասարակական ուժի վերածման համար:

Շատ հեղինակներ գաղափարախոսություններում տեսնում են գիտականության տարրեր: Օրինակ, ամերիկյան սոցիոլոգ Ի.Գորովիցն իր աշխատաքներից մեկում գաղափարախոսությունը ներկայացնում է որպես իրական և ոչ ճշմարիտ գիտելիքի ամբողջություն, հեղափոխական կամ հետադիմական շահերի և տեսակետների արդարացում, սոցիալական և հոգեբանական շարժառիթների իռացիոնալ ձևերի ռացիոնալացում<sup>9</sup>:

Քանի որ իրականության օբյեկտիվ արտացոլման հնարավորությունը գաղափարախոսության կողմից չի բացառվում, այլ էնթադրվում է, շատ հեղինակներ միանգամայն հնարավոր են համարում “գիտական գաղափարախոսության”

---

<sup>9</sup> Տե՛ս, Horowitz, Irving. Philosophie, science and the sociology of knowledge. Springfield (USA), 1961. P.80

գոյությունը: Նմանատիպ հայացքների կրողներից է հանդիսանում, օրինակ, Պ.Ռաչկովը, թեև գաղափարախոսության “գիտականությունը” նա դիտարկում է ոչ թե բացարձակ, այլ հարաբերական առումով<sup>10</sup>:

Այսպիսով, գաղափարախոսությունը, թեև մասնակիորեն, սակայն արտացոլում է իրականությունը և սերտորեն կապված է վերջինիս հետ: Երբեմն գաղափարախոսության միջոցով հնարավոր է անգամ օբյեկտիվորեն գնահատել սոցիալական իրականության առանձին կողմերը: Անհրաժեշտ է տարբերակել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են գիտականությունն ու ճանաչողական արժեքը: Գաղափարախոսությունը տվյալ պարագայում, լինելով ոչ գիտական, բայց միաժամանակ սոցիալապես պայմանավորված երևույթ, կարող է համապատասխան ճանաչողական արժեք ներկայացնել հասարակության համար:

Թեև գաղափարախոսությունն ու սոցիալական գիտությունը գործ ունեն միևնույն օբյեկտի հետ, նրանք տարբերվում են իրենց մոտեցումներով, ճանաչողական սկզբունքներով ու նպատակներով: Ինչպես նշում էր Էյնշտեյնը, գիտությունը քիչ հնարավորություններ ունի մարդկանց ներշնչելու որոշակի նպատակների իրականացման անհրաժեշտությունը: Առավելագույնը, նա կարող է միջոցներ տրամադրել որոշակի նպատակների հասնելու համար:

Հեղինակների մի ամբողջ խումբ գաղափարախոսությանը վերաբերվում է որպես կեղծ, կամ, լավագույն դեպքում, թվացյալ գիտելիքի: Նմանատիպ մտածողների թվին կարելի է դասել Կ.Մանհեյմին, Կ.Մարքսին, “ապագաղափարայնացման” գաղափարական հոսանքի վաղ շրջանի ներկայացուցիչներին /Է.Շիլս, Դ.Բեյլ, Ս.Ս.Լիփսեթ, Ռ.Արոն/: Գաղափարախոսության նկատմամբ նման մոտեցումը նկատվում նաև հետխորհրդային գիտության մի շարք հեղինակների մոտ:

---

<sup>10</sup> Ст' у, Рачков П.А. О смерти и бессмертии идеологии // Вестник Московского университета. Серия 7. Философия. №2. - 1999. - С. 35



## 1.2. Գաղափարախոսության կապը հասարակական գիտակցության այլ ձևերի հետ

Գաղափարախոսության էության առավել խոր ըմբռնման, ինչպես նաև հարակից երևույթների /աշխարհայացք, գիտություն, կրոն, իրավունք և այլ/, համեմատական վերլուծության համար անհրաժեշտ է կրկին անդրադառնալ հասարակական գիտակցությանը, բայց արդեն նրա ձևերի գոյության տեսանկյունից:

Ինչպես գիտենք, քաղաքական, իրավական, փիլիսոփայական, կրոնական, բարոյական, գեղարվեստական գիտակցությունները սերտորեն փոխկապված են և ազդում են միմյանց վրա: Ընդ որում, այս ձևերից մեկը կարող է հանդես գալ որոշիչի դերում: Այսպես, օրինակ, տոտալիտար համակարգերում տիրապետող է համարվում քաղաքական գիտակցությունը, իսկ թեոկրատական երկրներում՝ կրոնական գիտակցությունը:

Գաղափարախոսության հետ առավել սերտորեն կապված է քաղաքական գիտակցությունը: Որոշ հեղինակներ անգամ հակված են այն նույնացնել գաղափարախոսության հետ: Այդ հեղինակների թվին կարելի է դասել, օրինակ, խորհրդային շրջանի գիտնական Ա.Սպիրկինին, ով «քաղաքական գաղափարախոսություն» տերմինն օգտագործում է որպես «քաղաքական գիտակցության» հոմանիշ, գաղափարախոսության մասին խոսում է որպես «քաղաքացիների քաղաքական տրամադրվածություն»<sup>11</sup>:

Քաղաքական գիտակցության ներքո հասկացվում են մարդկային ոգու տարբեր դրսևորումները, որոնք արտահայտում են քաղաքական իշխանության մեխանիզմների գործառնությունն ու քաղաքական հարաբերությունների ոլորտում մարդկանց ու սոցիալական հանրությունների ուղղորդող վարքը:

Քաղաքական գիտակցությունը, ինչպես և գաղափարախոսությունը, առաջանում են հասարակության մեջ գոյություն ունեցող հակադիր շահերի առկայության պատճառով: Դրանց գումարվում են էթնիկ և կիսաէթնիկ պետական կազմավորումների շահերն, ինչպես նաև ոչ պակաս բարդ միջպետական

<sup>11</sup> Стéу, Спиркин А. Г. Философия. М .1998. – С. 654

հարաբերությունները, որոնք ևս հատուկ անդրադարձ են պահանջում: Այս քաղաքական երևույթները հիմնվում են ինչպես հոգեբանության, այնպես էլ ռացիոնալ ամբողջական տեսական համակարգերի վրա՝ առաջին հերթին կրելով դասային կամ ազգային պատկանելիության դրոշմը:

Քաղաքականությունը և քաղաքական պայքարը ներխուժում են կյանքի բոլոր ոլորտներ, թափանցում գիտակցության բոլոր ձևերի մեջ: Ըստ էության ցանկացած հասարակություն հազեցած է սուր սոցիալական հակասություններ ներառող քաղաքական շահերով: Հենց քաղաքական շահերն են ուղղորդում հասարակական կտիվ միավորումներին, կամ էլ զսպում սոցիալական բախումները, որոնցում գիտությունը, կրոնը և փիլիսոփայությունը կարող են ներքաշվել գաղափարական պայքարի ոլորտ: Հասարակության ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև հոգևոր կյանքը կախվածության մեջ են գտնվում քաղաքական շահերից:

Քաղաքականության ցանկացած սուբյեկտ սեփական գաղափարախոսությունը ձևավորելու կարիք ունի, որը կուղղորդի մարդկանց վարքը քաղաքական հարաբերությունների ոլորտում, կձևավորի քաղաքական կամքը, կմոբիլիզացնի նրանց ակտիվությունը, կնպաստի խմբերի սոցիալական ինտեգրմանը, որոնք ներգրավված են քաղաքական գործողություններում:

Պատմական զարգացման կոնկրետ փուլերում որպես հասարակական գիտակցության զանգվածային ձև հանդես է գալիս կրոնը: Կոնկրետ պատմական փուլերում այն անգամ իր վրա է վերցրել գաղափարախոսության գործառույթները: Գործնականորեն միայն միջնադարյան հասարակության աշխարհիկանացման գործընթացն է հանգեցրել է կրոնի փոխարինմանը գաղափարախոսությամբ: Բոլոր ժամանակներում նկատվել է այս երևույթների միջև փոխադարձ կապը: Այսպես, օրինակ, Բարոյական սոցիալիզմը մշտապես ապավինում էր որոշակի կրոնական համոզմունքներին, ինչն էլ հանգեցրել է քրիստոնեական սոցիալիզմի, իսլամական սոցիալիզմի և այլ ուղղությունների առաջացմանը:

Կրոնի և գաղափարախոսության ընդհանրության մասին խոսում էր նաև Ու.Մատցը: Նա գտնում էր, որ ինչպես գաղափարա-քաղաքական, այնպես էլ կրոնական պատկերացումների հիմքում ընկած է հավատը<sup>12</sup>: Հավատը /ինչպես

---

<sup>12</sup> St ' u, Matc Y. Идеология как детерминанта политики в эпоху Модерна // Полис. - 1992. - №№ 1-2

անհատական, այնպես էլ հասարակական/ մարդկային գիտակցության ձև է: Առանց հավատի /հավատ իդեալի նկատմամբ/ հնարավոր չէ ոչ մի մարդկային գործունեություն, այն մշտապես ուղեկցում է հասարակական զարգացումը:

Յուրաքանչյուր գաղափարախոսություն ունի արժեքների իր համակարգը, որն օգնում է մարկանց կողմնորոշվել իրենց շրջապատող աշխարհում: Նոր ժամանակների բոլոր գաղափարախոսություններին բնորոշ է հոգևոր-պատմական պատկերացումն ապագայի վերաբերյալ, որն իր հետ բերում է որակապես նոր, մարդկության համար ավելի բարվոք վիճակ: Թե գաղափարախոսությունները և թե կրոնները լուսավոր ապագայի հասնելու վերաբերյալ ծրագրեր են առաջ քաշում:

Եթե կրոնը դրախտը պատկերում է երկնքում, ապա գաղափարախոսությունը՝ երկրի վրա, բայց երկու դեպքում էլ այդ սպասումները միտված են դեպի ապագա: Կրոնական հավատի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իրենից բանականության և հոգևոր ապրումների միահյուսում է ներկայացնում: Ինչ վերաբերվում է գաղափարախոսությանն, ապա նա բանականության և ձգտումների միահյուսումը տեսնում է շահերի և իշխանական նկրտումների բավարարման մեջ:

Այս երևույթների ընդհանրությունը չի սահմանափակվում հավատով: Սկզբնապես, մարդկային հասարակության ակունքներում, կրոնի սոցիալական արմատներն էին տնտեսության զարգացմանցածր մակարդակը և դրանով պայմանավորված մարդու գիտակցության պարզունակ դրսևորումները, նրա անկարողությունը դիմակայելու բնության ուժերին: Մինչդեռ, տարասեռ հասարակության առաջացումով, կրոնի սոցիալական արմատները փոխակերպվում են միջխմբային հարաբերությունների: Դա մի կողմից իշխող խավի ձգտումն է ենթարկվող խավին պահել հնազանդության մեջ, մյուս կողմից՝ նրանց անգորությունը հասարակական զարգացման “տարերքի” առջև, որը դրսևորվում է անկայուն տնտեսական փոխհարաբերությունների միջոցով: Հենց դասային հասարակություններում կրոններն առավել գաղափարայնացվում են: Այդպիսի “գաղափարախոսական կրոնների” միջոցով հասարակության սոցիալական շերտերն ու խմբերը լուծում են իրենց հասունացած խնդիրներն ու արտահայտում սեփական շահերը: Այսպես առաջանում են որոշակի կրոնական ուղղություններ, որոնք

տարբերվում են պաշտոնական հայեցակարգերից և կոչված են համախմբելու ստորին սոցիալական շերտերը:

Գաղափարախոսության և կրոնի միջև նմանությունն արտահայտվում է նաև գործառության տեսանկյունից: Երկու երևույթներն էլ, օրինակ, իրականացնում են փոխհատուցման գործառույթ: Մեղմացնելով սոցիալական անբավարարվածությունը, կրոնը “փարատում” է, իսկ գաղափարախոսությունը հույս է ներշնչում՝ կապված սոցիալական գոյության բարենպաստ փոփոխության հետ: Համախմբման գործառույթ իրականացնելով, գաղափարախոսությունն ու կրոնը ամփոփում են անհատների վարքն ու գործունեությունը, միավորում են նրանց մտքերը, զգացմունքները, ձգտումները, ուղղում են սոցիալական խմբերի և ինստիտուտների ջանքերը, նպաստում են տվյալ հասարակության կայունությանը կամ նորի ձևավորմանը: Այսպես, քրիստոնեության գաղափարախոսական դրոշի ներքո իրականացվում էր ստրկության կործանումը Արևմտյան Եվրոպայում, կրոնական էր նաև վաղ բուրժուական հեղափոխությունների էությունը և այլն:

Գաղափարախոսությունն ու կրոնն իրականացնում են նաև կարգավորիչ գործառույթ՝ հանդես գալով որպես հասարակության մեջ մարդկանց վարքի կարգավորողներ: Այս երևույթների ընդհանրությունն արտահայտվում է նաև հաղորդակցային գործառույթում: Դրանք հանդիսանում են որպես մարդկանց միջև շփման միջոցներ:

Դրա հետ մեկտեղ պետք է նշել նաև այս երևույթների միջև գոյություն ունեցող տարբերությունները: Կրոնը մշակում է սոցիալական վարքի որոշակի չափանիշներ և դերային կարծրատիպեր, որոնք համապատասխանում են ոչ միայն արտաքին նորմատիվ պահանջներին /ինչն, ըստ էության, կապում է նրան գաղափարախոսության հետ/, այլև անհատի խորը ներքին պահանջմունքներին /ինչը նրան հեռացնում է գաղափարախոսությունից/: Գաղափարախոսությունը գաղափարների համակարգ է, որն իրեն ներկայացնում է ոչ միայն որպես բացարձակ ու համապարփակ ճշմարտություն, այլև կոնկրետ վարքաքիժ թելադրում մարդուն: Գաղափարախոսությունը մշտապես ուղղված է զանգվածներին, խմբին, ժողովրդին, դասին, մարդկությանը: Կրոնի իմաստը կայանում է նրանում, որ Աստծո հանդեպ հավատի միջոցով անհատը գտնի ինքն իրեն: Գաղափարախոսության իմաստը

մարդուն ամբողջապես ենթարկելու մեջ է: Ըստ Կանտի, կրոնը նպաստում է անհատի պարտականությունների ճանաչմանը աստվածային պատվիրանների միջոցով՝ որպես ցանկացած ազատ կամքի էական օրենքներ, որոնք, մինչդեռ, պետք է դիտարկվեն որպես բարձրագույն էության հրամաններ<sup>13</sup>:

Գաղափարախոսության ուսումնասիրությունն անհնար է առանց առասպելաբանության հետ կապի որոշման, որը ևս իր արտահայտությունն է գտնում հասարակական գիտակցության ոլորտում: Շատ հեղինակների կարծիքով գաղափարախոսությունն ու առասպելաբանությունը ոչ միայն փոխկապակցված են, այլև գրեթե համարժեք են: Այսպես, օրինակ, Կ.Լևի-Ստրոսը գրում էր, որ ոչինչ այդքան չի հիշեցնում առասպելաբանությունը, որքան քաղաքական գաղափարախոսությունը: Հնարավոր է, որ ժամանակակից հասարակությունում վերջինս ուղղակի փոխարինի առաջինին<sup>14</sup>:

Առասպելաբանության հետ գաղափարախոսության նման սերտ կապի մասին ընդգծում է նաև Ա. Կոլերը, նշելով, որ իրականության իմաստավորումը տեղի է ունենում խորհրդանշական շարքի հիման վրա: Իրականությունն, ըստ հեղինակի, ընկալվում է զգացմունքայնորեն: Խորհրդանիշների տեսք ընդունելով գաղափարախոսությունը բխում է առասպելաբանությունից, սակայն օրգանապես կապվում է հեքիաթայինին<sup>15</sup>: Նման մոտեցումը միանգամայն արդարացված է, քանզի այլ կերպ գաղափարախոսությունը կկորցնի իր սոցիալական եռանդը և կվերածվի ոչ պիտանի փոխկապակցված մտքերի շարքի:

Մինչդեռ պետք է նշել նաև այդ երևույթների միջև եղած տարբերությունները: Առաջին հերթին առասպելաբանությունը զանգվածային, կամ խմբային ստեղծագործության արդյունք է, իսկ գաղափարախոսությունը՝ առանձին վերցրած անհատների մտավոր աշխատանքի հետևանք: Առասպելի հիմքում ընկած է զանգվածային, իսկ գաղափարախոսության հիմքում խմբային կամ անհատական գիտակցության դրսևորումը: Երկրորդ՝ առասպելն իր էությամբ իռացիոնալ է, իսկ գաղափարախոսությունը՝ ռացիոնալ: Երրորդ՝ առասպելը զուրկ է քննադատական

<sup>13</sup> St 'u, Философский словарь: Основан Г. Шмидтом. Под ред. Г. Шишкоффа, М. 2008. – С. 382

<sup>14</sup> St 'u, Леви-Стросс К. Структурная антропология. М. 1983. – С. 186

<sup>15</sup> St 'u, Кольев А. Политическая мифология: Реализация социального опыта. – С. 218

չափումներից, այն ամրագրում է մարդու հարմարվողական վերաբերմունքը հասարակությանը: Գաղափարախոսությունը կարող է լինել ինչպես ներում հայցող /ջատագովական/, այնպես էլ հեղափոխական: Առասպելները հաճախ հանդիսանում են գաղափարախոսության աղբյուրներից մեկը: Առասպելը չի կարող գոյություն ունենալ առանց հայեցակարգի: Հակառակ դեպքում այն վերածվում է հեքիաթի, կամ, լավագույն դեպքում, չափազանցեցված խաբեության: Նման վերաբերմունքը փոխանցվում է նաև գաղափարախոսությանը: Եթե առասպելը, նրա հետ նաև գաղափարախոսությունը հայեցակարգային չեն, ապա դրանց դժվար է տարբերել սովորական հորինվածքներից կամ էլ կանխամտածված ստից:

Առասպելի մարմնավորումը ժամանակակից հասարակությունում կարող է արտահայտվել, մասնավորապես, քաղաքական բնագավառում: Միայն քաղաքական դաշտում են հանդիպում մարդկանց խմբեր, որոնք ի վիճակի են ոչ միայն առասպել հարուցել, այլև ընդունել այն որպես գործնական քաղաքականության ծրագրային հիմք: Նման խմբերի համար առասպելը պատրանք կամ մոլորություն չէ: Նրանց համար դա ընկած է աշխարհայացքի և աշխարհընկալման հիմքում:

Սոցիալական կյանքի կանոնակարգման գործընթացներում ակտիվ դեր է կատարում բարոյական գիտակցությունը, որում, ըստ Ս.Կրապիվկենսկու, իրենց արտացոլումն են գտնում հայացքներն ու պատկերացումները, նորմերն ու առանձին անհատների, սոցիալական խմբերի և ամբողջապես հասարակության գնահատականները: Բարոյականությունն այնպիսի կարգավորող համակարգ է, որն անհրաժեշտ է հասարակության կազմակերպական և քաղաքակրթական զարգացման համար<sup>16</sup>:

Այնուամենայնիվ, բարոյականությունն արտացոլում է սոցիալական կյանքի վերաբերյալ դիտարկումների ամբողջական համակարգը, որը պարունակում է հասարակության էության, պատմության, մարդու և նրա կյանքի այս կամ այն ըմբռնումը: Այդ իսկ պատճառով գերիշխող բարքերն ու սովորույթները բարոյականության կողմից կարող են գնահատվել նրա ընդհանուր սկզբունքների,

---

<sup>16</sup> Ст' у, Крапивенский С.Э. Социальная философия. – С. 204

իդեալների, չափանիշների տեսանկյունից, ինչպես նաև մերժել ընդունված կենսակերպը <sup>17</sup>:

Հասարակական գիտակցության մյուս ձևը, որը սերտորեն կապված է գաղափարախոսության հետ, հանդիսանում է իրավական գիտակցությունը: Մի շարք գիտնականներ իրավական գիտակցությունը դիտարկում են որպես “հասարակության անդամների իրավունքների և պարտականությունների ամբողջություն”: Ըստ Ա.Սպիրկինի, ում մոտեցումն առավել ընդունելի է, իրավագիտակցությունն իր մեջ է ներառում պատկերացումներն ու հասկացությունները, որոնք արտահայտում են մարդկանց վերաբերմունքը գործող իրավունքի նկատմամբ, իրավունքի ու պարտականությունների, օրինականության ու հակաօրինականության տեսանկյունից կարգավորում մարդկանց վարքագիծը <sup>18</sup>:

Իրավագիտակցության հիմքը կազմում են սեփական արժանապատվության զգացումը, խիղճը, ներքին կարգապահությունը, փոխադարձ հարգանքն ու քաղաքացիների վստահությունը մեկը մյուսի և իշխանությունների նկատմամբ, իսկ իշխանությունների կողմից՝ վերաբերմունքը հասարակության անդամների նկատմամբ: Իրավագիտակցությունը կապված է ինչպես քաղաքական ոլորտի, այնպես էլ բարոյական նորմերի հետ, որոնք գործում են տվյալ հասարակությունում: Այն փոխներթափանցում է քաղաքական և բարոյական գիտակցության մեջ: Ի տարբերություն քաղաքական գիտակցության /ինչպես նաև գաղափարախոսության/, իրավագիտակցությունը պետությանը վերաբերվում է ոչ թե որպես պայքարի օբյեկտ, այլ կարգավորիչ գործառույթ իրականացնող ուժի: Ի տարբերություն բարոյական նորմերի, որոնք բխում են հասարակական կյանքի պահանջներից և մարդկանց համար բացարձակ գնահատողական արժեք են ներկայացնում և օրենքի ուժ չունեն, իրավական նորմերն ընկալվում են որպես օրենսդրության համար անհրաժեշտ հիմքեր:

Իրավական տեսանկյունից գաղափարախոսությունն իրենից ներկայացնում է, զգացումների, պահանջումների, տրամադրությունների ռացիոնալացում, որը կոչված է արդարացնելու այս կամ այն սոցիալ-իրավական կարգը, կենսագործունեության կոնկրետ միջոցների անհրաժեշտությունը և

<sup>17</sup> Ст' у, Философский словарь. 7-е изд. М. 2001. – С. 342-343

<sup>18</sup> Ст' у, Спиркин А. Г. Философия. – С. 657

համապատասխանանում է կոնկրետ խմբերի շահերին: Հայտնի գիտնական Ա.Ֆ.Հայեկը, վերլուծելով արևմտաեվրոպական մայրցամաքի պատմության մեջ իրավաստեղծ գործունեությունը, նոր օրենքները գնահատում է որպես նպատակաուղղված գործունեություն, պետության ու կառավարող խմբի կամքի դրսևորում<sup>19</sup>:

Գաղափարախոսության հետ կապված է նաև հասարակական գիտակցության մեկ այլ ձև՝ աշխարհայացքը: Գիտական գրականությունում այս երկու հասկացությունները երբեմն հադես են գալիս որպես հոմանիշներ: Աշխարհայացքը հանդես է գալիս որպես առավել ընդհանուր պատկերացումների, գիտելիքների, ենթադրությունների, մտահայեցողական մոդելների, փիլիսոփայական սկզբունքների, գաղափարների, արժեքային կողմնորոշումների, համոզմունքների, իդեալների ամբողջական համակարգ, որոնց միջոցով մարդը գտնում է իր տեղը շրջապատող աշխարհում <sup>20</sup> : Աշխարհայացքը մարդու կողմից աշխարհի և հասարակության ընկալումն է, որը պարզաբանում է նրա սոցիալ-քաղաքական, փիլիսոփայական, կրոնական, բարոյական, գեղագիտական և գիտա-տեսական կողմնորոշումները:

Միայն զարգացած աշխարհայացքի հիմքով է հնարավոր դառնում արդյունավետ սոցիալ-մշակութային և քաղաքական գործունեությունը, լայնածավալ ստեղծագործական և անձնական նվիրումը, առանց որի չի կարող գոյատևել ոչ մի գաղափարախոսություն: Մյուս կողմից, գաղափարախոսությունն իր հերթին նպաստում է աշխարհայացքի ձևավորմանն ու կազմում դրա մասը՝ հարստացնելով այն ինչպես արժեքային, այնպես էլ ճանաչողական տեսանկյունից:

Մինչդեռ, աշխարհայացքի և գաղափարախոսության միջև գոյություն ունի եական տարբերություն ինչպես գործառութային, այնպես էլ բովանդակային տեսանկյունից: Բովանդակությամբ աշխարհայացքն ավելի լայն է գաղափարախոսությունից: Գաղափարախոսությունն ընդգրկում է աշխարհայացքի միայն այն հատվածը, որը կողմնորոշված է դեպի սոցիալական երևույթներն ու

---

<sup>19</sup> St 'u, Хайек Ф. А. фон. Право, законодательство и свобода: Современное понимание либеральных принципов справедливости и политики. М.2006. – С. 103

<sup>20</sup> St 'u, Бачинин В.А. Философия. Энциклопедический словарь. – С. 143



խմբային հարաբերությունները: Գաղափարախոսությունը աշխարհայացքի կոնկրետացումն է, նրա հատուկ ձևը սոցիալ-քաղաքական իրականության մեջ:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է եզրակացնել, որ գաղափարախոսության դիտարկումը որպես հոգևոր երևույթ՝ սերտորեն կապված հասարակական գիտակցության ձևերի և մակարդակների արտահայտման հետ, թույլ է տալիս առավել խորությամբ հասկանալ տվյալ երևույթի բազմազանությունն ու ներքին հարուստ բովանդակությունը: Գաղափարախոսության հետազոտումը հասարակական գիտակցության ձևերի փոխկապվածության տեսանկյունից վկայում է այն մասին, որ հոգևոր կյանքի ոչ մի երևույթ չի կարելի դիտարկել մեկուսացված: Փոխհարաբերվելով նրանց հետ գաղափարախոսությունը հանդես է գալիս որպես դրանց առանցքը, որոշակի արժեքային ուղղվածություն հաղորդելով այդ երևույթներին: Հանդիսանալով հասարակական կյանքի վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքների կրողը, գաղափարախոսությունը հարստացնում է այդ երևույթների բովանդակությունը և ապահովում սեփական ազդեցությունը հասարակության անդամների վրա:

## **Գլուխ 2. Գաղափարախոսության պատճառա-հետևանքային կապը սոցիալական իրականության հետ**

### **2.1. Գաղափարախոսության սոցիալական պայմանավորվածությունը**

Գաղափարախոսական ֆենոմենի բազմաբովանդակությունն ու բազմաշերտությունը հետազոտողներին ստիպում է տարբեր կողմերից մոտենալ այդ երևույթի ուսումնասիրությանը: Յուրաքանչյուր նման դեպքում որպես էլակետային առանձնացվում է գաղափարախոսության որևիցե կողմ կամ հատկանիշ: Առավել արդյունավետ են այդ ֆենոմենի բովանդակությանն ու սոցիալական կեցությանն անդրադարձող մոտեցումները:

Գաղափարական համակարգերի վրա իր ազդեցությունն է ունենում սոցիալական միջավայրը: Սակայն բացահայտելով գաղափարախոսական սկզբունքների նման պատճառահետևանքային կապը հետազոտողները տարբեր եղանակներով են գնահատում սոցիալական դետերմինատների դերը: Այնուամենայնիվ դրանց բոլորին կարելի է դասել “գաղափարախոսության սոցիալական պայմանավորվածության” տեսության կողմնակիցների շարքում: Այդ տեսության հիմնադիրն իրավամբ համարվում է Կարլ Մարքսը /1818–1883/, որի հայտնի դրույթը՝ հասարակական գիտակցության կախվածության մասին հասարակական կեցությունից, ընկել է համաշխարհային քաղաքական մտքի շատ հայտնի ներկայացուցիչների հայացքների հիմքում:

Գաղափարների սոցիալական պայմանավորվածությունը Կ.Մարքսը դիտարկում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների տեսանկյունից, որոնք բնորոշում են այս կամ այն հասարակության զարգացման աստիճանը: “Գերմանական գաղափարախոսություն” /1845–1846/ աշխատությունում, ինչպես նաև ավելի ուշ շրջանում տպագրված աշխատանքներում Կ.Մարքսը Ֆ.Էնգելսի հետ համատեղ օգտագործել է խեղաթյուրված գիտակցության բնութագրման համար: Ըստ Մարքսի, դա այն գիտակցությունն է, որը ձևավորվում է որոշակի սոցիալական խմբերի շահերի ներքո ընկալված հասարակության մասին գիտելիքների հիման վրա /ուշված աշխատությունում, օրինակ, խոսքը գնում է գերմանական բուրժուազիայի շահերի մասին/: Ընդհանրապես, Կ.Մարքսի պատկերացումները

գաղափարախոսության վերաբերյալ կարելի է հանգեցնել երեք հիմնական թեզերի՝ 1/ իդեալիստական հայեցակարգի, համաձայն որի աշխարհը գաղափարների, մտքերի և սկզբունքների մարմնավորում է. 2/ մտածողության տիպի, որը դրսևորվում է գաղափարախոսությունը ստեղծող մտավորականների մոտ, որոնք չգիտաքցելով սեփական շահերի կապը որոշակի դասակարգերի նյութական շահերի հետ, ինչպես նաև իրենց գործունեության օբյեկտիվ դրդապատճառները, մշտապես վերարտադրում են հասարակական գաղափարների բացարձակ ինքնուրույնության վերաբերյալ պատրանքները: 3/ իրականության բնութագրման մեթոդի, որի կիռառման ընթացքում իրականության օբյեկտիվ ըմբռնումը համապատասխանեցվում է դրա վերաբերյալ թվացող պատկերացումների հետ:

Մարքսիզմի հիմնադիրն ընդգծում էր, որ գաղափարախոսություններին հատուկ է իրականության խեղաթյուրված ընկալումը, որն առաջնային է դարձնում սոցիալական խմբի ոչ թե իրական, այլ թվացող շահերը: Այդ կապակցությամբ գիտական գրականության մեջ իշխում է այն կարծիքն, ըստ որի Կ.Մարքսը հավասարեցնում է գաղափարախոսությունը “կեղծ գիտակցության” հետ: Սակայն այդ պնդումն իրականությանը չի համապատասխանում: Իրենց հայտնի աշխատությունում Մարքսն ու Էնգելսը ոչ մի անգամ չեն օգտագործում այդ բառակապակցությունը:

“Գերմանական գաղափարախոսություն” աշխատությունում “գաղափարախոսություն” տերմինը նրանք օգտագործում են “իլյուզիա” հասկացության հետ: Տարբերությունն ակնհայտ է, քանզի այդ երևույթի կեղծ լինելը նշանակում է իրականության ընկալման նպատակադրված խեղաթյուրում, որը խիստ պարզեցնում է գաղափարախոսական ֆենոմենի խորքային բովանդակությունը: Այդ երևույթի մարքսիստական ըմբռնումը կապված է ոչ թե զանգվածների խաբեության, այլ նրանց “ինքնախաբեության” հետ: Ավելի շուտ, դա մարդու՝ որպես սոցիալական գործնականի մասնակցի կողմից իրականության սուբյեկտիվ ընկալումն է:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ մարքսիստական ձևակերպումներում շրջանառված են բազմիմաստ համեմատություններ՝ գաղափարախոսությունը մարդկանց կյանքի գործընթացի “արձագանք” է, “արտացոլանքներ”, որոնք կարող են հասնել իրականության վերաբերյալ “գլխի վրա

շրջված” պատկերացումների աստիճանի: Մի խոսքով՝ պատկերացումների ամբողջական համակարգ, որոնցով մարդկային պրակտիկան ինքն իրեն պարուրում է:

Գործնականի սահմանափակվածությունը չի կարող ընկալվել առանձին մարդու կողմից: Նա ընդունակ չէ օբյեկտիվորեն գնահատել սեփական կեցությունը, քանի որ իր հնարավորությունները ևս խիստ սահմանափակ են: Ուստի իր սեփական կեցությունը մարդը հակված է ներկայացնել որպես համընդհանուր կեցություն, օրենք և բնական անհրաժեշտություն: Նման մոտեցումը ողողում է մարդկանց գործունեության “մասնավոր” դրսևրումները “համընդհանուրի” հետ, ինչն էլ հիմք է հանդիսանում գաղափարախոսության առաջացման համար:

Գաղափարախոսություն հասկացությունը Կ.Մարքսն օգտագործում էր իր քաղաքական հակառակորդների հետ պայքարի համար: Այսպես, օրինակ, նա գաղափարախոսներ էր համարում լիբերալներին, որոնք կապիտալիզմն անվանում էին ազատության հասարակություն, որտեղ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի որոշել իր սեփական ճակատագիրը, ազատորեն կնքել ցանկացած պայմանագիր, որը կհամապատասխանի իր շահերին, որտեղ յուրաքանչյուրի հավասարությունն ու սոցիալական արդարությունը երաշխավորված են: Կ.Մարքսը գտնում էր, որ նման գաղափարախոսներն աղավաղում են իրականությունը հանուն իշխող բուրժուական դասի շահերի, որը ցանկություն չունի ճանաչել բանվորների անողորք տնտեսական շահագործումը: Դրանում էլ արտահայտվում է Կ.Մարքսի, այսպես կոչված, “դասային մոտեցումը” գաղափարախոսությանը, որն անուղղակիորեն կապվում է կոնկրետ դասի տնտեսական շահերի հետ: Այնուամենայնիվ, գաղափարախոսության սոցիալական հիմնավորվածությունն, ըստ Կ.Մարքսի, հանգեցնում է գլխավորապես նյութական հիմքին՝ տնտեսությանն ու արտադրական հարաբերություններին: Նման պարզեցումը, մինչդեռ, չպետք է ստվեր գցի ինքնին գաղափարների սոցիալական պայմանավորվածության սկզբունքի վրա, որը հաջողությամբ կիրառվում է Մարքսից հետո:

Արժե ընդգծել Կ.Մարքսի հայացքների որոշակի տարբերությունը Ֆ.Էնգելսի մոտեցումներից: Հենց Էնգելսն է համեմատում գաղափարախոսությունը կեղծ գիտակցության հետ: Այսպես, Ֆ.Մերինգին ուղղված նամակում, նա գրում է, որ

գաղափարախոսությունը գործընթաց է, որն իրականացնում է, այսպես կոչված, մտածողը, թեև գիտակցված, բայց կեղծ գիտակցության առկայությամբ: Իրական շարժիչ ուժերը, որոնք նրան դրդում են գործողությունների, իր համար մնում են անհայտ<sup>21</sup>:

Սեփական ուսմունքը Կ.Մարքսը հակադրում էր գաղափարախոսական ֆենոմոնին: Նա աշխատում էր չնմանեցնել իր տեսությունը ոչ գաղափարախոսությանը և ոչ էլ գիտությանը: Անգամ կոմունիստների ծրագրային փաստաթղթում՝ “Կոմունիստական կուսակցության մանիֆեստում”, որը մշակվել էր Ֆ.Էնգելսի հետ համատեղ, իր ուսմունքը Կ.Մարքսը գիտություն չի անվանում, այլ բնութագրում է որպես “ընթացող դասակարգային պայքարի իրական փոխհարաբերությունների միայն ընդհանուր արտահայտություն”: Այլ աշխատություններում Կ.Մարքսն ընդգծում էր կոմունիստական տեսության ոչ թե գիտական, այլ բացառապես դրա հեղափոխական և քաղաքական բնույթը, այսինքն դիտարկում էր այն որպես քաղաքական դոկտրին:

Այս կապակցությամբ Կ.Մարքսի զինակից Ֆ.Էնգելսն այն համարում էր կեղծ գիտակցություն, իսկ սոցիալիստական տեսությունը նա անզուշորեն ներկայացրեց որպես “գիտություն”: Այդ ժամանակներից քաղաքագետների կողմից Մարքսը ևս դասվեց այն մտածողների շարքին, որոնք կոմունիստական տեսությունը հավասարեցնում են գիտությանը:

Նման տեսաբաններից էր նաև Վ.Լենինը, որը որոշակիորեն առաջ անցավ սոցիալիզմի հիմնադիրներից և վերանայեց այդ տեսության որոշ հիմնարար դրույթներ: Նա փորձեց համատեղել գաղափարախոսությունն ու գիտությունը մեկ տեսական համակարգում: Լենինի կարծիքով, գաղափարախոսությունը կարող է գիտության վերաճել միայն մեկ դեպքում՝ երբ այն ներկայանում է պրոլետարիատի շահերն արտահայտող գաղափարական պլատֆորմի տեսքով: Այդ կապակցությամբ Լենինը գիտական շրջանառության մեջ մտցրեց “գիտական գաղափարախոսություն” տերմինը: Տեսական նման “վարժությունները” մի կողմից հավասարության նշան են դնում սոցիալական գիտության, մարքսիզմի և բանվոր դասակարգի գաղափարախոսության միջև, մյուս կողմից, արդարացնում մարքսիզմի

---

<sup>21</sup> St 'u, Энгельс Ф. Письмо Ф.Мерингу // Маркс К., Энгельс Ф. Собр.соч. в 50-ти томах. М.1955 - 1981. Т. 39. - С. 83

կողմնակիցների բոլոր քաղաքական, շատ դեպքերում նաև անօրինական, քայլերը: Այդ տերմինը Խորհրդային Միությունում հարմար գործիք էր դարձել ցանկացած քաղաքական որոշման արդարացման համար: Մարքսիզմի նման վերանայումը Լենինի կողմից, առաջին հերթին, պայմանավորված էր այն քաղաքական նպատակներով, որոնք դրված էին իր ղեկավարած կուսակցության առջև՝ հնարավոր բոլոր միջոցներով իրականացնել պրոլետարական սոցիալիստական հեղափոխությունը:

Մարքսիստական հայեցակարգի նույն դրույթները հակառակ եզրահանգումների հանգեցրին մեկ այլ մտածողի՝ գերմանացի փիլիսոփա և սոցիոլոգ Կարլ Մանհեյմին /1893–1947/: Գիտական գրականության մեջ առաջին անգամ նա աշխատեց սոցիոլոգիական դիրքերից բացահայտել քաղաքական գաղափարախոսությունների բնությունը, ցույց տալ դրանց բազմազանությունն ու բազմաբնույթ կապերը սոցիալական խմբերի, հասարակական կեցության և առանձին պատմական իրադրությունների հետ: Այդ կապակցությամբ Կ.Մանհեյմը տվեց քաղաքական գաղափարախոսությունների առավել ընդգրկուն և լիարժեք բնութագրությունը: Գաղափարախոսության վերաբերյալ շատ մոտեցումներում նմանվելով Մարքսին, այդ ֆենոմենի արմատների բացահայտման գործում նա անցավ ավելի առաջ: Ընդօրինակելով “գաղափարների սոցիալական պայմանավորվածության” մասին Կ.Մարքսի հայտնի թեզը, Կ.Մանհեյմը սոցիալական կեցությունն ամենևին չէր հանգեցնում միայն արտադրական ոլորտում տիրող հարաբերություններին, առավել ևս տնտեսական դետերմինիզմին: Նա գտնում էր, որ կեցությունն իր մեջ է ներառում ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական և հոգևոր-մշակութային տարրեր: Իր տեսական եզրակացություններում հետևելով Կ.Մարքսի մեթոդաբանությանը Կ.Մանհեյմը կիրառեց այդ սկզբունքները Մարքսի գաղափարական համակարգի նկատմամբ: Մանհեյմի շնորհիվ գիտնականների աչքերում սոցիալիստական տեսությունը հանդես եկավ որպես բուրժուական հասարակությունը մերժող գաղափարախոսություն:

Կ.Մանհեյմի կարծիքով, իշխող դասակարգն, առաջ քաշելով և տեսականորեն հիմնավորելով սեփական գաղափարական համակարգը որպես միակ ճշմարիտը, մի նոր հոգևոր երևույթ է ստեղծում, որն էլ կոչվում է գաղափարախոսություն:

Գաղափարախոսությունն արտահայտում է իշխողների այն տրամաբանությունն, ըստ որի իրենք ի վիճակի չեն տեսնելու սեփական իշխանությունը հարցականի տակ դնող իրական փաստերը<sup>22</sup>: Ընդ որում, ըստ Մանհեյմի, գաղափարախոսությունն ամենևին էլ չի պայմանավորում գիտակցված քաղաքական կեղծարարության առկայությունն, այլ ուղղակիորեն գտում է սոցիալական իրականությունից ստացվող ազդակները որևիցե սոցիալական խմբի շահերի համապատասխան:

Կ.Մանհեյմի կարծիքով, յուրաքանչյուր գաղափարախոսություն առկա հասարակարգի և ստատուս քվոյի գովաբանությունն է: Այս առումով Մանհեյմն ընդգծում է գաղափարախոսության՝ որպես հասարակական կյանքը կայունացնող երևույթի կարևորագույն հատկանիշներից մեկը: Նա գտնում է, որ գաղափարախոսությունն ամբողջական աշխարհայացք է, և այն առաջանում է ոչ միայն կոնկրետ կուսակցության անդամների, այլ նաև սովոր գանգվածների մոտ շրջապատող աշխարհի, առաջին հերթին քաղաքական կյանքի նկատմամբ որոշակի մոտեցում ձևավորելու նպատակով:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է եզրակացնել, որ գաղափարախոսության սոցիալական պայմանավորվածության տեսության դրույթներն իրենց առաջացմամբ պարտական են այնպիսի մտածողների, ինչպիսիք են՝ Կ.Մարքսն ու Կ.Մանհեյմը: Առաջինը, դնելով այդ տեսության հիմքերը, գաղափարների առաջացման գործընթացը դիտարկում էր նյութական արտադրությունում ընդգրկված շահերի խմբերի տեսանկյունից, դրանով իսկ զգալիորեն նեղացնելով “սոցիալական գոյության” շրջանակները տնտեսական հարաբերություններով: Կ.Մանհեյմը որոշակիորեն ընդլայնել է “սոցիալական իրականություն” հասկացության շրջանակները, դրանցում ներառելով ինչպես հասարակության սոցիալ-դասային կառուցվածքը, այնպես էլ սոցիալ-պատմական, մշակութային և կրոնական գործոնները, տալով գաղափարախոսություն հասկացության առավել ընդգրկուն սահմանումը:

Ընդհանուր առմամբ, “գաղափարախոսության սոցիալական պայմանավորվածության” տեսության դրույթները մեծ նշանակություն ձեռք բերեցին գաղափարախոսության տեսության հետագա զարգացման գործում: Տարբեր

---

<sup>22</sup> St' u Мангейм К. Идеология и утопия // Мангейм К. Диагноз нашего времени. М.1994. – С. 164.

մտածողների կողմից դրանք բազմիցս ենթարկվել են խիստ քննադատության, սակայն հաճախ ընկել են ժամանակակից հեղինակների տեսական հայացքների հիմքում: Այս փաստերն ապացուցում են տվյալ տեսության անժխտելի գիտական արժեքը: Իհարկե, կարելի է քննադատաբար մոտենալ այս տեսությանը, սակայն լիակատար մերժել այն՝ նշանակում է թերագնահատել գաղափարների սոցիալական պատճառաբանվածությունն, ուստի լուրջ գիտական հիմքից զրկել գաղափարախոսական ֆենոմենի վերաբերյալ տրված ցանկացած դատողություն:

## **2.2. Գաղափարախոսության էության արժեքային և հոգեվերլուծական մեկնաբանությունները**

Գաղափարախոսության բազմազանությունն ու բարդությունը ստիպում է հետազոտողներին մոտենալ տվյալ երևույթին տարբեր տեսանկյուններից: Յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում որպես ելակետային առանձնացվում են գաղափարախոսության որոշակի կողմերն ու առանձնահատկությունները: Գաղափարախոսության վերաբերյալ շատ պատկերացումների հիմքում ընկած է “արժեք” հասկացությունը: Ժամանակակից գիտական գրականության մեջ գաղափարախոսությունն հաճախ բնութագրվում է որպես արժեքների և նախապատվությունների համակարգ<sup>23</sup>: Ակսիոլոգիական կոչվող այդպիսի մոտեցման համաձայն գաղափարախոսությունը մեկնաբանվում է որպես սոցիալական որոշակի սուբյեկտների արժեհամակարգի տեսական հիմնավորում, որը պարզաբանում է աշխարհընկալման հիմնական սկզբունքները: Այս մոտեցումը չի հանդուրժում գաղափարախոսության բնութագրումները որպես իրականության ճշմարիտ կամ կեղծ արտացոլում: Այն դիտարկում է գաղափարախոսական ֆենոմենը որպես սոցիալական խմբերի կողմից կյանքի իրական պատկերի յուրահատուկ ընկալում: Կարելի է պնդել, որ ակսիոլոգիական մոտեցումն առավել հանդուրժողական է գաղափարախոսության նկատմամբ:

<sup>23</sup> Истон Д. Новая революция в политической науке // Социально–политический журнал. – 1993. – №. 8. – С. 115 –128; Дюверже М. Идея политики. Применение силы (власти) в обществе. М. 1991. – 267 с.; Парсонс Т. Система современных обществ. – М.1998. – 270 с.



Պետք է հաշվի առնել, որ ամենևին պարտադիր չէ, որպեսզի գաղափարախոսությունն իր մեջ ճշմարիտ կամ կեղծ պնդումներ պարունակի: Գաղափարախոսության “շեղումներն” իրականությունից բացատրվում են ոչ թե այն հանգամանքով, որ նա նպատակադրված կեղծում է իրական գործընթացների էությունը որոշակի քաղաքական ուժերի քմհաճույքները բավարարելու նպատակով, այլ շատ ավելի պարզ պատճառով՝ քանի որ արժեքներն իրենց բնույթով չեն կարող ադեկվատ կերպով արտացոլել իրականությունը: Արժեքներն արտահայտող գաղափարները ձևավորում են մարդկանց կողմից զգայանների միջոցով աշխարհի պարզ ընկալումներից տարբերվող մեկ այլ պատկեր: Մարդը չի կարող ընկալել իրականությունը չանցկացնելով այն սեփական գաղափարա-արժեքային կողմնորոշիչների համակարգի միջով, որի ընթացքում էլ առաջանում են համապատասխան “խեղաթյուրումները”:

Գաղափարախոսության արժեքային մեկնաբանության հիմնադիր է համարվում գերմանական փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն /1844–1900/: Խոսելով մտածողության տարբեր տիպերի մասին Ֆ.Նիցշեն օգտագործում էր “ազնվական” և “դեմոկրատական” մշակույթ հասկացությունները: Այս առումով փիլիսոփան զարգացնում էր վերնախավի բացարձակ իշխանությունը “միջակայության” նկատմամբ հաստատելու մասին էլիտական հայեցակարգն, ըստ որի կամքի ուժ ունեցող և իշխանության ձգտող “բարձրագույն կաստան” իրեն է ենթարկում “խաղաղասեր”, “ծերացած” և “թույլերի” մշակույթը:

Ըստ Ֆ.Նիցշեի, “բարոյականություն” բառի հետևում թաքնվում են էականորեն տարբեր իրողություններ: Խոսելով Եվրոպայում տարածում գտած քրիստոնեական բարոյականության մասին, Ֆ.Նիցշեն ընդգծում է, որ դա “մարդկային բարոյականության միայն մեկ տեսակն է, որից բացի, որից առաջ և հետո հնարավոր են շատ այլ, առաջին հերթին բարձրագույն «բարոյականություններ»<sup>24</sup>: Գոյություն ունեն բարոյականության տարբեր տեսակներ, իսկ նրանց ընդհանրությունն ու նմանությունը կայանում է նրանում, որ դրանք բաժանվում են երկու տեսակի՝ իշխողների և ստրուկների բարոյականություն: Ըստ Ֆ.Նիցշեի, հենց բարոյական

<sup>24</sup> St ' u, Ницше Ф. По ту сторону добра и зла // Ницше Ф. Соч.: В 2-х т. М.1990. – Т. 2. – С. 272

արժեքներն են ընկած ցանկացած հասարակության այս երկու տեսակների համապատասխան գաղափարական կառուցվածքներում:

Ստրուկտուրայի բարոյականությունը Ֆ.Նիցշեն ձևակերպում է այն տեսքով, որով այն ձևավորվել է անտիկ փիլիսոփայության ու քրիստոնեական կրոնի ազդեցությամբ և մարմնավորվել է անհատական-ճգնավոր, եկեղեցական-բարեգործական, համայնական-սոցիալիստական և մարդկային համերաշխության այլ հումանիտար ”փորձերում”: Ըստ Նիցշեի, Եվրոպայում այն դարձել է տիրապետող և եվրոպական հասարակական գիտակցության կողմից սխալմամբ ընունվել որպես, առհասարակ, բարոյականության հումանիշ:

Ըստ Ֆ.Նիցշեի, ստրուկտուրայի բարոյականությանը զուգահեռ գոյություն ունի իշխողների բարոյականություն: Պարոնը, գլխավորապես, մարդու որոշակի տեսակ է, որը բառի համապատասխան իմաստով հասել է իր բնական-պատմական առաքելության բարձունքին: Հեղինակը նրան անվանում է նաև գերմարդ: Ինչպես ստրուկին կարելի է նույնականացնել միայն ստրկական բարոյականության միջոցով, այնպես էլ գերմարդուն կարելի է ճանաչել միայն բարձրագույն բարոյականությամբ, վարքի ազնվականությամբ: Ֆ.Նիցշեի մոտ գերմարդը դառնում է ազնվականության գաղափարների կրողը:

Գերմարդը Ֆ.Նիցշեի բացահայտմամբ նոր տեսակ է, նոր ցեղ և մարդու նոր “որակ”: Գերմարդուն Նիցշեն անվանում է նաև փիլիսոփա և նրա ի հայտ գալը կապում է արժեքների վերագնահատման հետ: Փիլիսոփայի նշանակությունը կայանում է նրանում, որպեսզի նա արժեքներ ստեղծի: Իրական փիլիսոփաների էությունը համապատասխանում է տերերի ու օրենսդիրների էությանը: Ըստ Ֆ.Նիցշեի, նրանց կողմից աշխարհի ճանաչումը՝ ստեղծագործությունն է, նրանց ստեղծագործությունը՝ օրենսդրությունը, ճշմարտության նկատմամբ նրանց կամքը՝ կամք է իշխանության նկատմամբ<sup>25</sup>:

Ըստ Նիցշեի, արժեքների մասին հարցը, վերջին հաշվով, հանգում է մարդկանց կեցության խնդիրներին: Արժեքները մարդկանց կյանքի օրգանական մասն են կազմում, ուղղվածությունն ու իմաստը: Արժեքների ստեղծման գործն, ըստ Նիցշեի, մեծ պատասխանատվություն է պահանջում դրա նախաձեռնողներից, կապված

<sup>25</sup> St ' u, Ницше Ф. По ту сторону добра и зла // Ницше Ф. Соч.:– Т. 2. – С. 361-363

կյանքի նոր ձևերի ընտրության, մարդու էության կառուցվածքի փոփոխության ռիսկի հետ<sup>26</sup>: Ուստի այդ գործը կարելի է վստահել միայն հասարակության առավել ուժեղ սոցիալական շերտերին:

Գաղափարախոսության արժեքային մեկնաբանությունը զարգացվեց նաև Մաքս Վեբերի տեսությունում /1864-19320/: Դեռևս “Բողոքական բարոյականություն և կապիտալիզմի ոգին”<sup>27</sup> աշխատանքում նա ընդգծել է բողոքականության տեսությամբ պայմանավորված ժամանանակից արևմտյան կապիտալիզմի առանձնահատկությունները: Հենց բողոքականության հետ էր Մ.Վեբերը կապում արևմտաեվրոպական զարգացման հատկանիշը՝ ռացիոնալությունը, այն անվանելով “կապիտալիստական ոգի”:

Մ.Վեբերը փորձեց կապ հաստատել կրոնների և գաղափարախոսությունների միջև: Մ.Վեբերը ցույց տվեց, թե որտեղ և ինչպիսի սոցիալական պայմաններում են գերակշռում ծիսական-արարողակարգային, առեղծվածային-հայեցողական, մտավոր-դավանաբանական և այլ գործոնները սոցիալական շերտերի ու խմբերի կրոնական պատկերացումներում: Հեղինակը հաստատել է, կրոնների տարբեր ձևերի “անհատական նկարագիրը”, որոնք բնորոշ էին զարգացման բարձր աստիճանի հասած հասարակություններին:

Կարող ենք ընդգծել, որ, չնայած գաղափարախոսության տեսության մեջ Մ.Վեբերի մեծ ներդրմանը, նրա աշխատությունը կարելի է դիտարկել որպես իր ժամանակին լայն տարածում գտած ազատական-անհատական գաղափարական դրույթների հիմնավորման փորձ:

Գաղափարախոսության արժեքային հասկացողությունը բնորոշ է նաև հայտնի ամերիկյան սոցիոլոգ Թ.Պարսոնսին /1902-1979/, ով գտնում էր, որ արժեքները ցանկալի սոցիալական համակարգի վերաբերյալ պատկերացումներ են, “կոլեկտիվ պատկերացումների” ձևեր<sup>28</sup>: Գիտնականի նման հաստատումը ցույց է տալիս, որ նա գաղափարախոսությունը դիտարկում է շատ լայն առումով: Ըստ հեղինակի, գաղափարախոսության բովանդակությունը կազմում են մարդուն շրջապատող բոլոր երևույթներն ու առարկաները, քանի որ մարդը նրանց

<sup>26</sup> St 'u, Ницше Ф. Злая мудрость, афоризмы и изречения // Ницше Ф. Соч.: – Т.1.– С. 736.

<sup>27</sup> St 'u, Вебер М. Протестантская этика и дух капитализма. // Вебер М. Избранные произведения. М.1990. – С. 60-207

<sup>28</sup> St 'u, Парсонс Т. Система современных обществ. М.1998. – С. 18, 21

ճանաչողության ընթացքում դրանց նկատմամբ կոնկրետ մոտեցում է ի հայտ բերում, որը տարբեր սոցիալական համակարգերում կարող է տարբեր լինել: Պարսոնսը հասկանում է, որ բնության և հասարակության նկատմամբ մարդկանց վերաբերմունքը սերտորեն կապված է հասարակական համակարգի և տվյալ հասարակությունում իշխող աշխարհայացքի հետ:

Ըստ Թ.Պարսոնսի, գաղափարախոսությունը արժեքային կոմնորոշիչների օգնությամբ օրինականացնում է համակարգը, ինչը նպաստում է հասարակության կայունացմանը<sup>29</sup>: Ավելին, առանձնացնելով հիմնական խնդիրները, որոնք պետք է հաղթահարել “համակարգի” կայունության ապահովման գործում, կրոնական գործունեության հետ մեկտեղ Պարսոնսը մատնանշում է դրա այլընտրանքը՝ գաղափարախոսությունը<sup>30</sup>, որը կոչված է միավորիչ գործառույթներ իրականացնելու և ապահովելու այդ համակարգի միասնությունը:

Ընդհանուր առմամբ, այն հեղինակները, ովքեր ընդգծում էին գաղափարախոսության արժեքային նշանակությունը, հակված էին, հիմնականում, հասարակության մեջ նրա դերի դրական գնահատականին: Նախորդ դարի երկրորդ կեսի մի շարք հեղինակներ լոյալ վերաբերմունք ունեին այդ երևույթի նկատմամբ և իրենց վերաբերմունքով փորձում էին ժխտել այդ ժամանակ Արևմուտքում լայն տարածում գտած ապագաղափարայնացման հայեցակարգը:

Ամերիկյան հայտի սոցիոլոգ Կ.Մյուրդալը բացահայտորեն իր հայացքները հակադրում է այն տարածված տեսակետին, համաձայն որի գիտությունը ճշմարիտ գտնվելու համար պետք է լինի բացարձակ անկողմնակալ<sup>31</sup>: Շարունակելով Մյուրդալի այսպիսի պնդումը, Սայմոնը, արդարացիորեն սխալ էր համարում արժեքների հակադրումը գիտությանը, որպես, մի կողմից արտադրանքներ, զգացմունքներ, իսկ մյուս կողմից՝ որպես իդեալական և իրական, տրանսցենդենտալ և էմպիրիկ<sup>32</sup>: Անգլիական սոցիոլոգիայի դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ Բ.Կրիկը ևս կարծիք էր հայտնում այն մասին, որ սոցիալական գիտությունը չի կարող լինել

<sup>29</sup> St 'u, Парсонс Т. Система современных обществ. – С. 358

<sup>30</sup> St 'u, Парсонс Т. О структуре социального действия. М.2000. – С. 152

<sup>31</sup> St 'u, Мюрдаль Г. Современные проблемы третьего мира. М. 1972. 767 с.

<sup>32</sup> St 'u, Simey, T.C. Truth in sociology. “New society”, London. 1964, No.95. P. 19

անկողմանակալ, որ հասարակությունում ամեն ինչ գնահատվում է որոշակի արժեքային տեսանկյուններից<sup>33</sup>:

Գաղափարախոսությունը դիտարկելով որպես արժեքային համակարգ, նշյալ հեղինակներն արդարացիորեն փորձում են այն մոտեցնել իրականությանը և նրանում գտնել տարրեր, որոնք արտահայտված են իրական կյանքում: Նման մոտեցումը հանդուրժողական է գաղափարախոսության նկատմամբ՝ չդասակարգելով գաղափարական ուղղությունները դրականի և բացասականի: Արժեքային գործոնի առանձնացումը գաղափարախոսության մեջ նպաստում է դրա ընկալմանը որպես օբյեկտիվ երևույթի՝ անկախ հասարակական կյանքի այս կամ այն սուբյեկտների ցանկություններից: Գաղափարախոսություններն առաջանում են նման խմբերի օբյեկտիվ գործունեության արդյունքում:

Այն տեսություններից, որոնք խորանում են գաղափարախոսության էության մեջ, բացահայտում նրա առաջացմանը նպաստող գործոնները, հատուկ տեղ է զբաղեցնում դրա հոգեբանական մեկնաբանությունը: Գաղափարախոսության հասկացության հոգեբանական բնորոշումը սերտորեն կապված է հոգեբանությունում այնպիսի ուղղության առաջացմամբ, ինչպիսին հոգեվերլուծությունն է: Հոգեվերլուծության հիմնադիրն է համարվում Զիգմունդ Ֆրեյդը /1856-1939/: Վերջինս անդրադարձել է մարդկային հոգեբանության կառուցվածքին և անգիտակցական դրդապատճառների դերակատարությանը: Այդ հանգամանքը ստիպել է քաղաքական մտքի շատ մտածողների գաղափարախոսությունը դիտարկել նման տեսանկյունից:

Զ.Ֆրեյդն, ըստ էության, փորձ է անում ժխտել գաղափարների սոցիալական պայմանավորվածության տեսության հիմնական դրույթները, այն հակադրել հոգեբանական որոշիչին: Գաղափարների ծագման մեխանիզմները բացահայտելիս, Զ.Ֆրեյդը բացարձականացնում է գաղափարախոսության կապը հասարակական հոգեբանության հետ՝ վերջինիս տալով վճռական նշանակություն: Դա էականորեն հեռացնում է գաղափարախոսությունը սոցիալական կյանքից, ինչպես նաև թերագնահատում է ինքնին գաղափարախոսական գործոնի ազդեցությունը մարդկանց հոգեբանության վրա:

---

<sup>33</sup> St ' u, Crick, Bernard. What is truth in social science? "New society", London. 1964, No. 88. P. 20

Հոգեվերլուծության փիլիսոփայական ավանդույթների շարունակողն է Կարլ-Գուստավ Յունգը՝ /1875-1961/ շվեյցարական բժիշկ, հոգեբան ու փիլիսոփա: Տարիների ընթացքում Կ.Գ.Յունգն աշխատել է Չ.Ֆրեյդի հետ որպես հոգեվերլուծության փիլիսոփայության հետևորդներից մեկը, սակայն, հետագայում հեռացել է Չ.Ֆրեյդի հայացքներից: Ի տարբերություն ֆրեյդյան մշակույթի հայեցակարգի, Կ.Գ.Յունգի հայեցակարգն էականորեն ավելի խորությամբ է վերլուծում անգիտակցականը՝ դիտարկելով այն որպես հիմնարար խորհրդանիշների որոշակի ամբողջություն, որը մշակութա-քաղաքակրթական երանգներ է հաղորդում թե անգիտակցականին և թե գաղափարախոսությանը:

### **Գլուխ 3. Գաղափարախոսության գործառնության դերակատարությունը հասարակական կյանքում**

#### **3.1. Ֆրանկֆուրտյան դպրոցի մոտեցումը գաղափարախոսական ֆենոմենին**

Ֆրանկֆուրտյան դպրոցը դասում են արևմտյան մարքսուղղիային: Արևմտյան մարքսիզմի ֆրանկֆուրտյան դպրոցը 20-70-ական թթ. իր ուշադրությունը կենտրոնացրեց մշակույթի և գաղափարախոսության հարցերի վրա: 1968թ. Յ.Հաբերմասը գրում էր, որ ֆրանկֆուրտցիների ողջ գաղափարական ուղղությունը հանգում էր, ըստ էության, գաղափարախոսության մշտական քննադատությանը: Դա հիմնականում պայմանավորված էր իրենց սոցիալական փիլիսոփայության հիմնական դրույթներով:

Չնայած իր անդամների գիտական տեսակետների բազմազանությանն ու հակադրությանը, ֆրանկֆուրտյան դպրոցը հասարակագիտության պատմության մեջ մտավ որպես քննադատական սոցիոլոգիա: Նման ուղղվածությունն իր մեջ երկակի իմաստ է ներառում: Առաջին հերթին, ֆրանկֆուրտցիների վարդապետությունը որոշ չափով հակադրվում է “ավանդական տեսությանը”, որը բխում է երկակիությունից, որտեղ ճանաչող սուբյեկտը օբյեկտիվ իրականությունն է: Հասարակությունն, ըստ ֆրանկֆուրտցիների, իրենից ներկայացնում է միաժամանակ և՛ “սուբյեկտ”, և՛ “օբյեկտ” /այսինքն, ընդունվում է և՛ մեկի, և՛ մյուսի ինքնությունը/: Երկրորդ, ուսումնասիրվող դպրոցի անխտիր բոլոր ներկայացուցիչները հանդես էին գալիս որպես ժամանակակից կապիտալիստական հասարակության համոզված ու թեժ քննադատներ:

Նման մոտեցումն իր արտացոլումը գտավ “ընդհանուր ժխտում” հասկացության մեջ, որը լայնորեն ներկայացված է ֆրանկֆուրտյան գիտնականների գաղափարներում ու դրույթներում: Բնութագրական է նաև, որ ինքնին “քննադատությունը” նույնացվում էր “դիալեկտիկայի” հետ: Ֆրանկֆուրտցիների դատողություններում դիալեկտիկան ընդունվում է “բացասական” եղանակով, այդ

իսկ պատճառով փիլիսոփայական տեսակետն ու նրանց հետազոտման ընդհանուր մեթոդն անվանում են “բացասական դիալեկտիկա”:

“Բացասական դիալեկտիկայի” մեթոդաբանական սկզբունքի առավել մանրամասն մշակմամբ զբաղվում էր Հերբերտ Մարկուզեն: “Բանականություն և հեղափոխություն. Հեգելը և սոցիալական տեսության առաջացումը” /1941/ գրքում, որը դարձել էր ֆրակֆուրտյան դպրոցի ծրագրային աշխատանքը, նա փորձում էր թարմացնել Հեգելի դիալեկտիկայի քննադատական ուղղվածությունը: Ընդ որում, նա ուշադրություն է հրավիրում այն ոլորտների վրա, որոնք անհաշտ հակասություններ են պարունակում<sup>34</sup>:

Այլ կերպ ասած՝ ճշմարտությունը այն չէ, ինչ մենք անուղակիորեն տեսնում ենք, ընդունում կամ տրամաբանորեն ընկալում, այլ այն, ինչ դեռ փաստ չի դարձել, բայց, ըստ դիալեկտիկայի տրամաբանության, ապագայի լույսի ներքո պետք է դառնա իրականություն: Ըստ Գ.Մարկուզեի, դիալեկտիկական մատերիալիզմը, իր հերթին, ոչ բավարար խորությամբ է վերլուծում հասարակական ինստիտուտների ազդեցությունը կյանքի և մարդու գիտակցության վրա: Այլ կերպ ասած, մարքսիստական մատերիալիզմը բավարար հաշվի չի առնում ներքին հակասությունների ինտեգրման ուժը, որոնք գործում են արդեն “զարգացած կապիտալիզմի” պայմաններում:

20-րդ դ. 60-ական թթ. “բացասական դիալեկտիկայի” մեկնաբանությամբ հանդես եկավ նաև Թեոդոր Ադորնոն, ըստ որի նախկինում փիլիսոփայությունը վերացական բնույթ է կրել, իսկ այժմ անհրաժեշտ է ուշադրությունը հրավիրել կոնկրետ իրականության վրա՝ իր եզակիությամբ ու բացառիկությամբ:

Ֆրանկֆուրտյան դպրոցի հիմնական հայացքների ձևավորումը տեղի է ունեցել 30-60-ական թթ.՝ արդյունաբերական կապիտալիզմի, այսպես կոչված, “ֆորդյան-թեյլորական” կամ “ֆորդյան-կեյնսիանական” <sup>35</sup> փուլում: Այդ ժամանակաշրջանում ծրագրավորված էր կառավարողների և կատարողների միջև հատուկ գործողությունների մանրամասն սահմանափակումը: Ընդ որում վերջիններս ավելի շատ էին օտարվում որոշումների կայացման գործընթացից, ավելի ու ավելի քիչ էին հասկանում սեփական գործողությունների իմաստն ու նպատակը:

<sup>34</sup> Տե՛ս, Маркузе Г. Разум и революция: Гегель и становление социальной теории. СПб.2000. – С. 441

<sup>35</sup> Տե՛ս, Уэбстер, Фрэнк. Теории информационного общества. М. 2004. – С. 87-91



Ֆրանկֆուրտյան դպրոցի ներկայացուցիչներն ուշադրությունը կենտրոնացնում են անհատի ճնշման հանգամանքի վրա՝ իրեն շրջապատող և իր նկատմամբ իշխող մշակութային միջավայրի կողմից: Տ.Շրոյերն, օրինակ, հայտարարում էր, որ ժամանակակից աշխարհում մարդը ավելի շատ ճնշվում է ռացիոնալիզմի դրսևորումներից, քան տնտեսական կամ սոցիալական պարտադրանքներից<sup>36</sup>:

Իր “Տեխնիկա և գիտությունը որպես գաղափարախոսություն” աշխատանքում Յու.Հաբերմանն առաջարկեց առանձնացնել գաղափարախոսության երկու ձևեր՝ քաղաքական գաղափարախոսություն, որը բնորոշ է նախորդ դարաշրջաններին, և ժամանակակից ”գաղափարախոսություն”՝ տեխնոկրատական գիտակցություն, որը ծագում է արդյունաբերական հասարակության պայմաններում: Այն ազատ է “կեղծ գիտակցության” որոշ տարրերից, որոնք բնորոշ են նախորդ ձևին: Գ.Մարկուզեն գիտության և տեխնիկայի մասին պատկերացումները ևս առանձնացնում էր որպես գաղափարախոսության նոր ձևեր: Տեխնիկան, ըստ հեղինակի, դարձավ “ճնշող կառավարման” և սոցիալական վերահսկողության միջոց և այդպիսով քաղաքական և գաղափարական չափումներ ձեռք բերեց<sup>37</sup>:

Թ.Ադորնոն, Յու.Հաբերմասը և այլք տարբերություն էին անցկացնում նախկին բուրժուական և ներկա հետկապիտալիստական հասարակություններում դրսևորվող գաղափարախոսության ձևերի և դերակատարության միջև: 19-րդ դ. գաղափարախոսությունը, առաջին հերթին, քաղաքական տեսություն էր: Այժմ գաղափարախոսությունը հանդես է գալիս գանգվածային մշակույթի տեսքով: Գաղափարախոսությունն այլևս գոյություն չունի որպես քաղաքական երևույթ: Այն անցում է կատարում “տնտեսական”, “լուսավորչական” /կրթական/, “քարոզչական” ձևերի:

Ըստ ֆրանկֆուրտցիների, գաղափարախոսության դերն իր վրա է վերցրել “գանգվածային մշակույթը”: Այն նրանց կողմից դիտարկվում էր որպես “լավ կազմակերված”, “բյուրոկրատացված” կառույց, որը կանոնակարգում է ողջ ժամանակակից մշակութային կյանքը, ֆրանկֆուրտյան դպրոցի այլ ներկայացուցիչ

<sup>36</sup> Տե՛ս, Schroyer T. Toward a critical theory of advanced industrial society // Recent Sociology. 1970. №2

<sup>37</sup> Տե՛ս, Ирхин Ю.В., Зотов В.Д., Зотова Л.В. Политология. М. 1999. – С. 340

Մ.Ջեյի խոսքերով, վարչական, կարգավորվող, երկրորդային, կեղծ և ոչ իրական մշակույթ<sup>38</sup>:

Գաղափարախոսության վերաբերյալ Ֆրանկֆուրտյան դպրոցի տեսաբանների մոտեցման ընդհանուր պատկերը լիարժեք չէր լինի առանց դրա սոցիալական ուղղվածության որոշման: Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք Գ.Մարկուզեի մոտ: Ըստ նրա, ժամանակակից հասարակության ռացոնիալացման, բյուրոկրատացման, ճնշված քաղաքակրթության պայմաններում ձևավորվում է անհատականության որոշակի տեսակ, որը Գ.Մարկուզեն անվանում է “միաչափ մարդ”:

Այսպիսով, ֆրանկֆուրտյան, ինչպես նաև ողջ ձախ արմատական սոցիոլոգիայի շրջանակներում, տեղի է ունենում գաղափարախոսության մեկնաբանության ընդհանուր տեղաշարժ՝ դեպի հիպերգաղափարայնացում: Չնայած գաղափարախոսությանը տրվող բացասական գնահատականին կամ նույնիսկ դրա գոյության ժխտմանը, հիպերգաղափարայնացման հայեցակարգը գտնում է, որ նա արտացոլված է ամենուրեկ, ինչպես հոգևոր, այնպես էլ հասարակական կյանքի այլ ոլորտներում, իսկ գաղափարախոսության, մշակույթի, քաղաքականության և արտադրության միջև սահմանը, առհասարակ, վերանում է:

Գաղափարախոսության հետաքրքրական մեկնաբանություններից մեկը, որ կարելի է դասել հասարակությունում գաղափարախոսության ինչպես բացասական, այնպես էլ դրական մոտեցմանը, 80-ական թթ. առաջարկել է ժամանակակից գերմանացի քաղաքագետ Ու.Մատցը: Գաղափարախոսություններն, ըստ Ու.Մատցի, ավելին են, քան կեղծ տեսությունը: Նրանք հանդես են գալիս քաղաքական աշխարհայացքի դերում՝ օժտված հավատի ուժով: Քաղաքական գաղափարախոսությունները “կապված” են պատմական զարգացման կոնկրետ փուլի հետ: Համաձայն Մատցի, եթե միջին դարերում մարդկանց միավորում էր կրոնը, ապա այժմ դա անում է պետությունը “ներքին կրոնի”՝ գաղափարախոսության միջոցով: Այդ պատճառով գաղափարախոսությունները կեղծ կրոններ են: Գաղափարախոսությունը կյանքի է կոչում կոնկրետ քաղաքական գործնականը, սկիզբ դնելով մտավոր կամ զանգվածային շարժումների: Այդ իսկ պատճառով այն

---

<sup>38</sup> St ' u, Jay M. The dialectical imagination. Boston, 1973. P.216

պետք է հասկանալի լինի և ընդունվի մարդկանց կողմից: Միննույն ժամանակ, Ու.Մատցը գտնում էր, որ գաղափարախոսությունները, գերակշռող դեր ստանձնելով Արևմուտքի քաղաքական մշակույթում, գործառութային-անհրաժեշտ տարր չեն հանդիսանում բաց հասարակության համար:

### **3.2. “Ինդուստրիալ հասարակության” տեսությունն ու սիմվոլիզմի էությունը**

Գիտության մեջ գնահատողական մոտեցումը գաղափարախոսությունը դիտարկում է որպես ձևավորված երևույթի և նրան գնահատական է տալիս՝ համեմատելով այն իրականության, բարոյականության, ազատության և անհատի արժանիքների հետ: Ակնհայտ է, որ գաղափարախոսության նման մեկնաբանությունը կտարբերվի սուբյեկտիվությամբ ու կողմակալությամբ: Մյուս կողմից, այն թույլ է տալիս գաղափարախոսությունը դիտարկել գործառութային տեսանկյունից, ավելի ամբողջական դարձնելով պատկերացումները հասարակական-քաղաքական գործընթացներում այդ երևույթի նշանակության մասին:

Նման մոտեցումներից է դարձել “ապագա գաղափարայնացման” հայեցակարգը, որի հիմքում ընկած է 60-ական թթ. ամերկյան սոցիոլոգ և քաղաքագետ Դ.Բեյլի և այլ հայտնի հետազոտողների կողմից առաջ քաշված “հետարդյունաբերական հասարակության” գաղափարը: Դ.Բեյլը հակադրում է մարքսիզմին համաշխարհային պատմության իր մեկնաբանությունը տեխնոլոգիաների և գիտելիքի զարգացման աստիճանի տեսանկյունից: Ըստ հեղինակի, գաղափարախոսության նման մեկնաբանությունը առավել բովանդակալից ու արգասաբեր է գիտական իմաստով:

Իր “Ապագա հետինդուստրիալ հասարակություն” գրքում, որը լույս է ընծայվել 1973թ. Նյու-Յորքում, Դ.Բեյլը փորձ է անում զարգացնել այդ գաղափարը և ներկայացնել այն տեսության տեսքով <sup>39</sup> : Դրա հրատարակումից հետո “հետարդյունաբերական հասարակության տեսությունը” ավելի հայտնի է դառնում Արևմուտքի մասնագետների շրջանում: Այն, ըստ էության, տեխնոլոգիական

---

<sup>39</sup> St 'u, Белл Д. Грядущее индустриальное общество. Опыт социального прогнозирования. М.1999. – С.956

դետերմինիզմի տեսանկյունից է մոտենում սոցիոմշակութային իրականության և հասարակական-պատմական գործընթացի հասկացությանը:

Քաղաքական ոլորտում հասարակության զարգացման հետարդյունաբերական փուլի գլխավոր առանձնահատկությունՆ, ըստ Դ.Բեյլի, հանդիսանում են սեփականությունից կառավարման անջատումը, ժողովրդավարությունը և “մերիտոկրատիան”: Օգտագործելով “մերիտոկրատիա” տերմինը՝ Դ.Բեյլը հետևյալ կերպ է հստակեցնում դրա բովանդակությունը. մերիտոկրատիան ընդգրկում է նրանց, ովքեր առավել արժանավորներն են, ովքեր մարմնավորում են իրենց ոլորտներում լավագույն մասնագետներին<sup>40</sup>:

Հետարդյունաբերական հասարակությունը, որն ընդհանրապես Դ.Բեյլի կողմից հասկացվում է որպես գիտա-տեխնիկական հեղափոխության անուղղակի ազդեցությամբ ժամանակակից կապիտալիզմի հասարակ փոխակերպում, վերջնականապես վերանում են բոլոր դասային հակասությունները, մարում են սոցիալական հակամարտությունները և ամբողջապես դադարում է դասային պայքարը: Այս հանգամանքը տեսաբաններին ստիպեց հարցականի տակ դնել գաղափարախոսության հասարակական նշանակությունը:

50-ական թթ. վերջերին և 60-ականների սկզբներին, արևմտյան քաղաքական մտքի շատ հայնի ներկայացուցիչների մոտ համոզմունք առաջացավ, ըստ որի գաղափարախոսության դարաշրջանը մնում է անցյալում: Ամերիկյան սոցիոլոգ Է.Շիլսն առաջինը առաջ քաշեց “գաղափարախոսության ավարտի” վերաբերյալ կարգախոսը: “Ապագադարայնացման” հայեցակարգի հեղինակների թվին են դասվում նաև Դ.Բեյլը և Ս.Ս.Լիփսեթն ԱՄՆ-ում, Ռ.Արոնն ու Ժ.Ֆուրաստյեն՝ Ֆրանսիայում:

Համարվում էր, որ գաղափարախոսության հիմնական չափանիշն է գիտական օբյեկտիվությունից շեղումը: Իսկ քանի որ գաղափարախոսությունը թափանցում է սոցիոլոգիա և այլ գիտություններ, ապա չի կարող լինել ո՛չ օբյեկտիվ սոցիալական տեսություն, ո՛չ էլ օբյեկտիվ գիտություն: Այս առումով

---

<sup>40</sup> St`u, Белл Д. Грядущее индустриальное общество. Опыт социального прогнозирования. М.1999. – С. 612-613

“ապագադափարայնացման” հայեցակարգը հետևում էր սոցիալական գիտության ներկայացուցիչների՝ մասնավորապես Կ. Մահեյմի գաղափարներին<sup>41</sup>:

“Ապագադափարայնացման” հայեցակարգի կողմանկիցները, հակադրելով գիտությունը գաղափարախոսությանը, փորձում էին ապացուցել, որ առաջինը ենթադրում է օբյեկտիվորեն ճշմարիտ գիտելիքներ, այն դեպքում, երբ գաղափարախոսությունը արտահայտում է սուբյեկտիվ, սոցիալ-դասային շահերը: Համաձայն Ս.Լիփսեթի, ժամանակակից արդյունաբերական հասարակությունն ի վիճակի է իր խնդիրները լուծել առանց գաղափարական դոգմաների: Է.Շիլսը փորձեց հիմնավորել մաքուր, գնահատողական դատողություններից ազատ սոցիալական գիտության անհրաժեշտությունը:

Հասարակության առաջադեմ զարգացումը կապելով գիտա-տեխնիկական առաջընթացի հետ, “ապագադափարայնացման” հայեցակարգի կողմանկիցները պնդում էին, որ տեխնոլոգիական և տնտեսական դետերմինիզմի սկզբունքը չի տարածվում քաղաքական կառույցների և գաղափարական հարաբերությունների վրա: Նրանցից շատերը ժխտում էին երկու սոցիալական համակարգերի՝ կապիտալիզմի և սոցիալիզմի կոնվերգենցիայի տեսությունը:

Համաձայն Ռ.Արոնի, արդյունաբերական հասարակության պայմաններում վերացել է կապիտալիզմի և սոցիալիզմի միջև պատմական կոնֆլիկտի հրատապությունն ու հիմնավորվածությունը, կամ էլ դրանք հանդես են գալիս որպես միևնույն հասարակության երկու տարբեր տարատեսակներ: Մակայն, նա կանխագուշակեց սոցիալիզմի անխուսափելի կլանումը կապիտալիզմի կողմից՝ նկատի ունենալով Արևմուտքի տնտեսության առավել բարձր արդյունավետությունը<sup>42</sup>:

Այսպիսով, “ապագադափարայնացման” հայեցակարգի առաջացումը հանդիսանում էր ռացիոնալիստական գիտակցության յուրատեսակ ապստամբությունն ընդդեմ իռացիոնալ գաղափարախոսությունների: Թերևս, կա նաև մետադադրամի մյուս կողմը. նույն հայեցակարգի համաձայն գաղափարախոսություններն ի վիճակի են “գերության” մեջ պահել հասարակությունը, նույնիսկ գիտական ձեռքբերումների դարաշրջանում: Չէ որ հենց

<sup>41</sup> St 'u, Мангейм К. Идеология и утопия // Мангейм К. Диагноз нашего времени. М. 1994. - С. 27

<sup>42</sup> St 'u նույն տեղում, էջ 125-129

այս հանգամանքն է հղում այն մտքին, որ գաղափարախոսությունները, թեև հանդիսանում են գիտակցության թվացյալ ձևեր, սակայն ի վիճակի են հավաքագրել հասարակությունը, ուղղորդել իրական քաղաքական գործընթացը, դրա հետ մեկտեղ արտահայտել իրական հասարակական հարաբերությունները:

Գաղափարախոսության գոյության սոցիալական հիմքերը ժամանակի ընթացքում փոխվում են, բայց դրանով հանդերձ երբևե չեն անհետանում: Հասարակության հետ ի հայտ գալով, գաղափարախոսությունը գոյություն է ունենում այնքան ժամանակ, որքան հասարակությունը: Հասարակությունները /ինչպես նաև սոցիալական խմբերը/, չեն կարող գոյություն ունենալ գաղափարախոսությունից զատ, այդիսկ պատճառով “ապագաղափարայնացման” բոլոր տեսությունները ինչպես աջ քաղաքական ուժերի մոտ, այնպես էլ ձախերի, նմանապես անկայուն են:

Ինքնին “արդյունաբերական հասարակության” հայեցակարգը “ապագաղափարայնացման” գաղափարի հետ ուներ իր սոցիալական հիմքը: Այն յուրատեսակ գաղափարական պայքար էր այլ գաղափարախոսությունների, մասնավորապես՝ մարքսիստականի “հարձակումների” դեմ: Այս հայեցակարգը վստահորեն կարելի է անվանել մի գաղափարախոսությունը մյուսով փոխարինելու փորձ: Հատկանշական է, որ անգամ նրանք, ովքեր սկզբնապես կարգախոսներ էին հռչակել հասարակության “ապագաղափարայնացումն” ու “գաղափարախոսության ավարտը”, հետագայում ստիպված էին հրաժարվել իրենց կանխատեսումներից:

Այսպես, 70-ական թթ. աշխարհում տարածում գտած տարբեր ժողովրդավարական և ազատագրական շարժումները /ռասայական հակամարտությունները, Վիետնամում պատերազմը, Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում երիտասարդական հեղափոխությունները/ հանգեցրին “վերագաղափարայնացման” հայեցակարգի առաջացմանը, որը մեծացնում էր գաղափարախոսության դերն ու նշանակությունը հասարակության զարգացման գործում: “Վերագաղափարայնացման” առաջատար տեսաբանները /Ռ.Արոնը, Դ.Բեյլը, Օ.Լեմբերգը, Ռ.Նիսբերը և այլք/ եկան այն համոզման, որ անհնանրին է բացառել հասարակական կյանքում գաղափարական գործոնները և միտք արտահայտեցին, ըստ որի հին գաղափարախոսության սպառումը նորի առաջացման անհրաժեշտություն է առաջացնում:

“Վերագաղափարայնացման” հայեցակարգն ընդունում էր քաղաքական և սոցիալական կյանքի աճող կախվածությունը գաղափարախոսությունից, հաստատուն և հեռանկարային զարգացումը: Վերագաղափարայնացման միտումների հետ կապված արևմտյան գրականությունում քննարկվում է հարցն այն մասին, թե իրականում ինչ նկատի ունեին Ռ.Արոնը, Ջ.Բժեզինսկին, Դ.Բելլը, Ս.Ս.Լիփսեթը, Է.Շիլզը և այլք, երբ խոսում էին “գաղափարախոսության ավարտի” մասին: Օրինակ, Ջ.Բժեզինսկին ճշգրտեց, որ “գաղափարախոսության ավարտի” ներքո նա հասկանում էր միայն դավանականությունը, համակարգումը<sup>43</sup>, իսկ Դ.Բելլն ընդգծեց, որ “գաղափարախոսության ավարտի” վերլուծությունը չի ենթադրում բոլոր սոցիալական հակամարտությունների վերացում: Այս հայեցակարգի բոլոր ներկայացուցիչներն իրենց հայտարարություններում միաձայն էին՝ ժամանակակից աշխարհում գաղափարների դերն աճում է:

Ինչպես արդեն նշվել է, գաղափարախոսության տեսության մշակմանը զուգահեռ տարբեր հետազոտողների կողմից տեղի էր ունենում ուշադրության աստիճանական անցումը գաղափարախոսության առաջացման պատճառներից դեպի նրա գործառույթներն ու հետևանքները:

Այս պարագայում, հետազոտողների ուշադրության կենտրոնում, վաղ թե ուշ, պետք է հայտնվեին գաղափարախոսության գործառնման մեխանիզմներն ու “աշխատանքի ուղիները”: Ժամանակակից փուլում, հատկապես արևմտյան սոցիալական գիտությունում, տարածում գտավ գաղափարախոսության՝ որպես “հատուկ խորհրդանշական ձևի” մասին մեկնաբանությունը, որի համաձայն տեղի է ունենում “բարդ գաղափարական” համակարգի փոխարինումը մեկ այլ՝ առավել պարզով, բայց, միևնույն ժամանակ, առավել արդյունավետ համակարգով՝ նիշերի լեզվով:

Գաղափարախոսությունը կապվում է սոցիալական գործողության խորհրդանշական կառուցվածքի հետ՝ սկսած հայտնի արևմտյան սոցիոլոգներ Կ.Գիրցի և Պ.Ռիկյորի հետազոտություններից: Այս իմաստով գաղափարախոսությունը հանդես է գալիս իբրև “լեզու”, որը հնարավոր է դարձնում քաղաքական

---

<sup>43</sup> St 'u, Brzezinski Z. Between Two Ages. America's Role in the Technetronic Era. N.Y., 1970. P. 45

հաղորդակցությունը: Սոցիալական հոգեբանության մակարդակով այն տանում է անհատների ինտեգրմանը քաղաքական վարքի որոշ օրինակների հիմքով:

1964թ. գաղափարախոսությունների վերաբերյալ գիրք հրատարակվեց Դ.Ապտերի խմբագրությամբ, որում հեղինակներն /Կ.Գիրց, Ֆ.Կոնվերս/ առաջարկեցին այդ “հնացած” տերմինի նոր մեկնաբանությունը: Մոտավորապես նույն ժամանակ լույս տեսան Ռ.Լեյնի աշխատանքները՝ նվիրված գաղափարախոսության ուսումնասիրությանը զանգվածային համոզմունքների մակարդակով<sup>44</sup>:

Հետևելով հասարակության զարգացմանը ֆեոդալիզմից վաղ, իսկ հետո ուշ կապիտալիզմի, Ն.Աբերկրոմբին և նրա գործընկերները գալիս են այն եզրակացության, որ միայն վերջին փուլում են առաջանում գաղափարների տարածման համար անհրաժեշտ միջոցները /լրատվամիջոցներ, պարտադիր կրթություն/: Սակայն այստեղ դժվար է խոսել իշխող դասի գաղափարախոսությունը ճնշվածներին պարտադրելու հնարավորությունների մասին: Առաջին հերթին գաղափարախոսությունը չափազանց հակասական է, որպեսզի “ճնշվածները” կարողանան ամբողջապես այն ըմբռնել: Երկրորդ, ստորին դասերի մշակույթը պահպանում է ինքնավար, քանզի իշխող դասերը հնարավորություն չունեն վերահսկելու առօրյա քննարկումները:

Գաղափարախոսության հայեցակարգի վերաիմաստավորման սկիզբը դրել է Կ.Գիրցի “Գաղափարախոսությունը որպես մշակութային համակարգ”<sup>45</sup> հոդվածը, որում հեղինակն առաջարկում է գաղափարախոսության նոր ընկալումը: Ըստ Գիրցի, գաղափարախոսությունների մարզինալ դերը չափազանց մեծանում է ժամանակակից հասարակություններում: Համաձայն հեղինակի, գաղափարախոսությունը ապահովում է մեզ հեղինակավոր հայեցակարգերով և իմաստավորված, համոզիչ ձևերով, համոզում այդ քաղաքականության ճշմարտացիության մեջ<sup>46</sup>:

Պ.Ռիկյորը միջոց գտավ կապել Կ.Գիրցի կողմից նկարագրված գաղափարախոսության ինտեգրատիվ գործառույթը դեռևս Մարքսի “աղավաղման” գործառույթի հետ: Ըստ ֆրանսիացի փիլիսոփայի, գաղափարախոսությունը կարող է

<sup>44</sup> St 'u, Lane R. Political ideology: Why the American common man believe what he does. N. Y., 1962; Lane R. Political man. N. Y., 1972

<sup>45</sup> St 'u, Гирц К. Идеология как культурная система // Новое литературное обозрение. М.: 1998. Ном. 29

<sup>46</sup> St 'u, Geertz C. Ideology as a cultural system // Apter D.E. (ed.) Ideology and discontent. Glencoe, 1964. P. 63



ման գործառույթ իրականացնել միայն այն պատճառով, որ մարդկանց սոցիալական կյանքի կառուցվածքն արդեն խորհրդանշական է և կարող է խեղաթուրվել<sup>47</sup>: Ըստ Պ.Ռիկյորի, գաղափարախոսությունը փորձում է ապահովել իշխանության և քաղաքացիների միջև միասնությունը՝ լեգիտիմացնելով գործող համակարգը<sup>48</sup>:

Բրիտանական սոցիոլոգ Ջ.Թոմփսոնը ձևակերպել է գաղափարախոսության վերաբերյալ իր հատուկ մոտեցումն, ըստ որի գաղափարախոսությունը շատ հեղինակների կողմից օգտագործվում է իբրև մաքուր նկարագրողական տերմին: Ըստ Թոմփսոնի, ժամանակակից հասարակություններում լրատվության զարգացումն էականորեն ընդլայնել են գաղափարախոսության շրջանակները, որոնք հնարավորություն են ստեղծում լայն լսարանին խորհրդանշական տեսակները փոխանցելու համար: Լրատվությունը ոչ միայն միջոց է, որով տեղի է ունենում խորհրդանշական ձևերի տարածումը, այլ նաև “հնարավոր է դարձնում սոցիալական փոխազդեցության նոր տեսակները, և այդպիսով ծառայում սոցիալական հարաբերությունների վերակառուցմանը”<sup>49</sup>:

Ընդհանուր առմամբ, Ջ.Թոմփսոնի կողմից առաջարկված գաղափարախոսության հասկացությունը զգալիորեն տեղաշարժում է հետազոտողների ուշադրությունը փիլիսոփայական տեքստերից, քաղաքական ծրագրերից ու հայեցակարգերից, ուղղելով այն զանգվածային հաղորդակցության ուսումնասիրությանը: Չնայած որոշակի միակողմանիությանը, Ջ.Թոմփսոնի գաղափարախոսության գործառման մեխանիզմի մոտեցումն ընդգծում է գաղափարախոսության երևույթի գլխավոր գծերից մեկը՝ ձգտումը մարդկանց ենթարկեցնել պարզեցված և լայն լսարանին հասանելի ձևակերպումների, այսինքն՝ պարզ մանիպուլյացիայի միջոցով:

Ինչպես տեսնում ենք, գաղափարախոսության վերոնշյալ հետազոտությունների վերլուծությունը հստակորեն ցուցադրում է հիմնական միտումները՝ կապված ժամանակակից աշխարհում գաղափարախոսության հայեցակարգի վերախմաստավորման հետ: Առաջին հերթին, դա կապված է գաղափարախոսության կիրառման ոլորտի ընդլայնման հետ: Հետազոտողների

<sup>47</sup> St 'u, Rieieur P. Lectures on ideology and utopia. N. Y., 1986. P. 10

<sup>48</sup> St 'u նույն տեղում, էջ 14

<sup>49</sup> St 'u, Thompson J. B. Ideology and modern culture. Critical social theory in the era of mass communication. Oxford. 1990. P. 225

ուշադրությունը գրավում են ոչ այդքան պատճառները, որոնք ծնում են այդ “կեղծ” և “թվացյալ գիտակցությունը”, որքան դրա գործառնական մեխանիզմները: “Կեղծ գիտակցության” ուսումնասիրության հիմնախնդիրը, փաստորեն, մերժվում է ժամանակակից հետազոտողների կողմից:

Փոխվել է նաև “գաղափարախոսության” հասկացության ծավալն ու նրա կիրառման ոլորտը: Համաձայն Ջ.Թոմփսոնի, գաղափարախոսության վերլուծությունը պետք է կենտրոնանա ոչ այնքան համոզմունքների աշխարհիկ համակարգի, որքան տարբեր խորհրդանշական երևույթների էության պարզաբանման վրա<sup>50</sup>:

Այս առումով պետք է ընդգծել, որ համաշխարհային տեղեկատվական տարածությունը լի է խորհրդանշական ձևերով, որոնք որոշակի “գաղափարական պաշարներ” են պարունակում: Հենց այս ձևերի միջոցով որոշ գաղափարական համակարգեր ձգտում են ընդլայնել իրենց սոցիալական բազան: Չէ՞ որ գաղափարական պարզ և հասարակության կողմից հասանելի խորհրդանշական ձևերի կիրառմամբ քարոզչությունն էականորեն դյուրանում է:

Գաղափարախոսության նոր մեկնաբանության լույսի ներքո կարող են վերանայվել նրա շատ գործառույթներ: Մասնավորապես, ակնհայտ է դառնում, որ գործող կարգի լեգիտիմացումը կարող է տեղի ունենալ ոչ միայն զանգվածների գիտակցության մեջ “անհրաժեշտ” գաղափարների ներդրման, այլև գիտակցության և ենթագիտակցության վրա ազդեցության ավելի նուրբ մեխանիզմների կիրառման միջոցով:

Այսպիսով, ժամանակակից հետազոտողների կողմից առաջարկված մեկնաբանությունները, չնայած որոշակի միակողմանիությանը, թույլ են տալիս ավելի ընդգրկուն նկարագրել մի շարք երևույթներ, որոնք ի հայտ են գալիս լեզվի, իշխանության, հանրային նպատակների ու փորձի հատման կետում: Մակայն, չարժե խոսել գաղափարախոսության անհետացման մասին՝ որպես “գաղափարական համակարգերի”, թեև փոփոխված սոցիալական պայմանները չէին կարող հետք չթողնել նրանց ձևավորման ու գործառնական վրա: Գաղափարախոսության հանրային արտադրությունն ու տարածումն այսօր արդեն չի հանդիսանում բացառապես

---

<sup>50</sup> St´u, Thompson J. B. Ideology and modern culture. Critical social theory in the era of mass communication. Oxford. 1990. P. 265

մտավոր դասի մենաշնորհը: Այս գործընթացում ակտիվորեն մասնակցում են խորհրդանշական ձևերի այլ արտադրողներ ևս, առաջին հերթին ՋԼՄ-ները: Գաղափարախոսությունն արտահայտվում է ոչ միայն ավանդական քաղաքական տեքստերում, այն ամենուր է, այդ իսկ պատճառով նրա ուսումնասիրության համար անհրաժեշտ է կիրառել վերլուծության տարբեր մեթոդներ: Մինչդեռ “նոր” մեթոդներն ամեննին չեն մերժում “հները”, այլ փոխարացնում են միմյանց:

Ընդհանուր առմամբ, 20-րդ դ. երկրորդ կեսը, թերևս, ամենակատաղի շրջանն էր գաղափարախոսության հասկացության ավելի քան երկդարյա պատմության մեջ: Սակայն, չնայած գաղափարախոսության կասկած հարուցող սահմանումներին, մեկ պնդում չունի այլընտրանք՝ գաղափարախոսությունները իրականության արտահայտման սոցիալապես պայմանավորված միջոցներ են, որոնք, իրենց հերթին, ձգտում են ազդել քաղաքական գործնականի վրա:

Մինչ այժմ տրվել են գաղափարախոսության տարբեր սահմանումներ: Նրանցից յուրաքանչյուրում ընդգծվում են այս երևույթի տարբեր կողմերը, հատկանիշները, կախված այն բանից, թե ինչ նպատակներ են հետապնդում հետազոտողները և ինչպիսի միջոցներ են նրանք կիրառում: Մինչդեռ պետք է նշել, որ գաղափարախոսության առավել համապարփակ և հիմնարար սահմանում, կարելի է հանդիպել, թերևս, խորհրդային, կամ էլ ներկայիս հետխորհրդային գիտությունում:

Գաղափարախոսության բազմաթիվ բնորոշումներում գերիշխում է այդ երևույթի ճանաչողական կողմը: Այսպես, օրինակ, Ս.Կրապիվենսկին գաղափարախոսությունը սահմանում է որպես տեսական հայացքների համակարգ, որն արտահայտում է ամբողջական աշխարհի և հասարակության կողմից նրա տարբեր կողմերի ճանաչողության մակարդակը<sup>51</sup>: Սակայն, որքան էլ այս սահմանումը մոտ է գաղափարախոսության էությանը, այնուամենայնիվ, այն միակողմանի բնույթ է կրում:

Գաղափարախոսությունն, ի տարբերություն գիտության, կենտրոնացած է ոչ այնքան ճանաչողության օբյեկտի, որքան սուբյեկտի շահերի վրա: Գիտական գրականությունում շատ հաճախ հանդիպում են գաղափարախոսության սահմանումներ, որոնք հիմք են ընդունում սոցիալական խմբերի և ամբողջ

---

<sup>51</sup> Ste ' u, Крапивенский С.Э. Социальная философия. – С. 196

հասարակության շահերը, որոնցում գերակշռում է արժեքային ոլորտը: Ռ.Մուխանը կարծում է, որ գաղափարախոսություններն արդիական են իրենց շահերն արտահայտող կոնկրետ սոցիալական խմբի և անհատի համար<sup>52</sup>: Որոշ հեղինակներ գաղափարախոսությունը սահմանում են, ելնելով այն հանգամանքից, որ այդ երևույթը հանդես է գալիս որպես գիտակցության տեսական մակարդակ: Օրինակ, Վ.Շևչենկոն գրում է, որ գաղափարախոսությունը իդեալների, արժեքների, նպատակների և հայացքների որոշակի ամբողջություն է, որի միջոցով արտահայտվում է մարդկանց վերաբերմունքը գոյություն ունեցող սոցիալական իրականության, նրա առանձին խնդիրների ու հակամարտությունների նկատմամբ<sup>53</sup>: Կամ ավելի պարզ, գաղափարախոսությունը հասարակական կյանքի արտացոլումն է սոցիալ-խմբային կամ դասային շահերի տեսանկյունից:

Որոշ հետազոտողներ հակված են գաղափարախոսությունը դիտարկել որպես քաղաքականություն, կամ նույնականացնել քաղաքական գիտակցության հետ /Ա.Սպիրկին/, կամ էլ դիտարկել այն քաղաքական գործընթացների տեսանկյունից:

Գիտնականների մեկ այլ խումբ գաղափարախոսությունը սահմանում է որպես հայացքների և գաղափարների համակարգ, որում գիտակցվում, գնահատվում և արտահայտվում են մարդկանց հարաբերությունները իրականության և միմյանց վերաբերյալ, ինչպես նաև ուղղված են տվյալ հասարակական-քաղաքական հարաբերությունների ամրապնդմանը կամ փոփոխմանը<sup>54</sup>: Գաղափարախոսության նմանատիպ բնութագրություն է տալիս նաև Ա.Իվինը, ով գտնում է, որ գաղափարախոսությունը կոնկրետ հասարակությունում ընդունված պատկերացումների և գաղափարների համակարգ է, որի միջոցով գիտակցվում ու գնահատվում են մարդկանց հարաբերությունները միմյանց նկատմամբ, իմաստավորվում են սոցիալական խնդիրներն ու հակամարտությունները, նշմարվում սոցիալական գործունեության նպատակները<sup>55</sup>:

Հեղինակների հաջորդ խումբն իր ուշադրությունը կենտրոնացնում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում գաղափարախոսության դրսևորումների վրա, դիտարկելով այն փիլիսոփայական, գիտական,

<sup>52</sup> St 'u, Мухаев Р.Т. Политология. М., 2006. – С. 339

<sup>53</sup> St 'u, Шевченко В. Н. Идеология // Философский словарь. Под ред. И.Т.Фролова. М., 2001. – С. 199

<sup>54</sup> St 'u, Ольшанский Д.В. Политико-психологический словарь. М., 2002. – С. 160

<sup>55</sup> St 'u, Ивин А.А. Основы социальной философии, 2005. – С. 207

գեղարվեստական, բարոյական, իրավական, քաղաքական, տնտեսական համակարգերի, սոցիոլոգիական գիտելիքների և աշխարհում գոյություն ունեցող արժեքների տեսանկյունից<sup>56</sup>:

Գաղափարախոսության սահմանման վերաբերյալ վերոնշյալ բոլոր մոտեցումներն իրավամբ հեռու չեն ճշմարտությունից, քանի որ տարբեր տեսանկյուններից բացահայտում են գաղափարախոսության էությունը, բացատրում դրա տարբեր արտահայտությունները, շերտերն ու դրսևորման մակարդակները: Մակայն, արժե նշել, որ գաղափարախոսության առավել ընդունելի սահմանումը կարող է ներկայացվել հետևյալ կերպ. գաղափարախոսությունը քաղաքական, տնտեսական, իրավական, գեղարվեստական, փիլիսոփայական և կրոնական գիտելիքների ու արժեքային նախապատվությունների ամբողջություն է, որը բխում է կոնկրետ սոցիալական և էթնիկական հանրությունների շահերից ու ձգտումներից և հիմնվում է նրանց սոցիալական հոգեբանության վրա, հանդես է գալիս որպես ողջ հասարակության պահանջումների արտահայտություն և ներառում է սոցիալապես կողմնորոշված կանոնակարգեր, որոնք օգնում են գիտակցել և գնահատել մարդկանց վերաբերմունքը սոցիալ-քաղաքական իրականության և միմյանց նկատմամբ, ինչպես նաև ուղղել նրանց ակտիվությունը սոցիալական հարաբերությունների ամրապնդմանը կամ փոփոխմանը:

Դրանով հանդերձ պետք է նշել, որ տվյալ սահմանումը ևս չի կարող հավակնել այնպիսի երևույթի բացարձակ բնութագրմանը, ինչպիսին գաղափարախոսությունն է: Պահանջվում է այս երևույթի դիտարկումը հասարակական կյանքի բոլոր մակարդակներում, բոլոր դրսևորումներով, որպեսզի հնարավոր լինի օբյեկտիվ պատկերացում կազմել դրա էության և դերի մասին:

---

<sup>56</sup> Ст 'а, Волков Ю.Г. Политическая идеология современной России. – Кислицын С.А. (ред.). Ростов-на-Дону, 1998. – С. 254

## Առաջարկվող գրականության ցանկ

1. Арон Р. Демократия и тоталитаризм. – М.: Фонд “Открытое общество”, 1993.
2. Белл Д. Грядущее индустриальное общество. Опыт социального прогнозирования. –М.: Academia, 1999.
3. Вебер М. Протестантская этика и дух капитализма // Вебер М. Избранные произведения. – М.: Прогресс, 1990.
4. Гегель Георг Вильгельм Фридрих. Письма // Работы разных лет: Серия “Философское наследие”. – В 2-х т. – М.: Мысль, 1970–1973.
5. Гирц К. Идеология как культурная система // Новое литературное обозрение. – 1998. – № 29.
6. Енгоян А.П. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. – Ер.: Изд-во Российско-Армянского университета. 2011.– 357 с.
7. Ивин А.А. Основы социальной философии, М. 2005.
8. Истон Д. Новая революция в политической науке // Социально-политический журнал. – 1993. – № 8.
9. Кармин А.С., Бернацкий Г.Г. Лекции по философии. Екатеринбург, 1992.
10. Кольев А. Политическая мифология: Реализация социального опыта. – М.: Логос, 2003.
11. Крапивенский С.Э. Социальная философия, 1993.
12. Леви-Стросс К. Структурная антропология. – М.: Наука, 1983.
13. Мангейм К. Идеология и утопия // Мангейм К. Диагноз нашего времени. М.: Юрист 1994.
14. Маркузе Г. Разум и революция: Гегель и становление социальной теории. – СПб.: Владимир Даль, 2000.
15. Мухаев Р.Т. Политология. М., 2006.
16. Маркс К. Восемнадцатое брюмера Луи Бонапарта // Маркс К, Энгельс Ф. Сочинения. – М.: Госполитиздат, 1957.
17. Маркс К. Нищета философии // Маркс К., Энгельс Ф. Сочинения. – М.: Госполитиздат, 1955.
18. Маркс К. Энгельс Ф. Немецкая идеология // Маркс К., Энгельс Ф. Сочинения. – М.: Госполитиздат, 1955. – Т. 3. – С. 7–544.

19. Матц У. Идеология как детерминанта политики в эпоху Модерна / У.Матц // Полис. 1992. № 1-2
20. Мизес Л. фон. Всемогущее правительство: Тотальное государство и тотальная война. – Челябинск: Социум, 2006.
21. Мюрдаль Г. Современные проблемы третьего мира. – М.: Прогресс, 1972.
22. Ницше Ф. По ту сторону добра и зла // Ницше Ф. Соч.: В 2-х т. – М.: Мысль, 1990.
23. Ольшанский Д. Основы политической психологии, Екатеринбург, 2001.
24. Ольшанский Д.В. Политико-психологический словарь. М., 2002.
25. Парсонс Т. О структуре социального действия. – М.: Академический проект, 2000.
26. Парсонс Т. Система современных обществ. – М.: Академический проект, 1998.
27. Рачков П.А. О смерти и бессмертии идеологии. Вестник Московского университета. – Серия 7. Философия. – 1999. – № 2.
28. Современная философия: словарь и хрестоматия. Ростов-на-Дону. 1995.
29. Спиркин А. Г. Философия, 1998.
30. Туманян В.С. К вопросу об определении политики // Вестник Российско-Армянского Университета. – 2009. – № 1.
31. Уэбстер, Фрэнк. Теории информационного общества. – М.: Аспект Пресс, 2004.
32. Философский словарь. 7-е изд. М., 2001.
33. Философский словарь: Основан Г. Шмидтом. Под ред. Г. Шишкоффа, 2008.
34. Философский энциклопедический словарь.- М., 1989.
35. Фрейд З. Психология бессознательного. – М.: Просвещение, 1991.
36. Хайек Ф. А. фон. Право, законодательство и свобода: Современное понимание либеральных принципов справедливости и политики. – М.: ИРИСЭН, 2006.
37. Шевченко В. Н. Идеология // Философский словарь. Под ред. И.Т.Фролова. М., 2001.
38. Энгельс Ф. Письмо Ф. Мерингу // Маркс К., Энгельс Ф. Собр. соч. в 50-ти т. – М.: Изд-во полит. лит-ры, 1955 – 1981.
39. Abercrombie N., Hill S., Turner B.S. The Dominant Ideology Thesis. London, 1980.
40. Altusser L. Politics and history: Montesquien, Roussean, Marx. London, 2007.
41. Brzezinski Z. Between Two Ages. America's Role in the Technetronic Era. N.Y., 1970.

42. Converse P.E. The nature of belief systems in mass public // Apter D.E. (ed.) Ideology and discontent. N.Y., Free Press, 1964..
43. Geertz C. Ideology as a cultural system // Apter D.E. (ed.) Ideology and discontent. N.Y., Free Press, 1964.
44. Horowitz, Irving. Philosophie, science and the sociology of knowledge. Springfield (USA), 1961.
45. Kress G., Hodge R. Language as ideology. London, 1979.
46. Kress G. Ideological Structures in Discourse // Van Dijk T. A. (ed.) Handbook of Discourse Analyses. Vol. 4, London, 1985.
47. Lane R. Political ideology: Why the American common man believes what he does. N.Y., 1962.
48. Ricoeur P. Lectures on ideology and utopia. N.Y., 1986.
49. Rokeach M. Beliefs, attitudes and values: Theory of organization and change. San Francisco, 1972.
50. Simey, T.C. Truth in sociology. "New society". London, 1964, № 95.
51. Seliger M. Ideology and Politics London, 1976.
52. Thompson J. B. Ideology and modern culture. Critical social theory in the era of mass communication. Oxford, Polity Press, 1990.
53. Freedman M. Editorial: Political ideology at century's end // Journal of Political Ideologies. 2000. Vol. 5, № 1.
54. Crick, Bernard. What is truth in social science? "New society", London. 1964, No. 88.
55. Schroyer T. Toward a critical theory of advanced industrial society // Recent Sociology. 1970, № 2.